


ԲԱԳՆԱԲԼՍԱՐՈՒԹԻՒՆ

ԿԱՄ

ՈՒՍՈՒՄՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿՐԹՈՒԹԵԱՆ

ԳՈՐԾ ՄԵԾԱՆՈՒՆ ՃՕՅԱ ՓԻԼԻՍՈՒ
ՓԱՅԻՆ ԻՏԱԼԱՅԻՈՅ

ԹԱՐԳՄԱՆԵԱՅ ՊԱՏՈՒԵԼԻ ՅՈՎՀԱՆՆԷՍ ՏԵՐ
ԿԱՐԱՊԵՏԵԱՆ ՉԱՄՈՒԹՃԵԱՆՑ ՊՐՈՒՍԱՑԻ



ՏՊԵՑԱԻ ՀՐԱՄԱՆԱԻ ՎԵՀԱՓԱՌ ՊԱՏՐԻԱՐԳԻ
ՏԵԱԹՆ ԱՍՏՈՒԱԾԱՏՐՈՅ ԱՐՔ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ

ՀԱՏՈՐ՝ Գ

Ի ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

Ի ՏՊԱՐԱՆԻ ԱՐԱՊԵԱՆ

1843 = ՌՄՂԲ

Յ Լ Ն Կ

Զ Ո Ր Ր Ո Ր Գ Ն Լ Տ Ո Ր Ո Յ

Գ Լ Ո Ւ Խ . Օ . Անցեալ դարերուն մէջ բարքերուն աված և գեշտած ըլլալը : թղթ .	1
Գ Լ Ո Ւ Խ . Ե . Նոյն նիւթոյն վրայ :	18
1 . Արդարութիւնը կաշառքով ծախելը :	անդ
2 . Սուտ երդում ընել :	23
Գ Լ Ո Ւ Խ . Ը . Անցեալ դարերուն մէջ՝ հասարակութեան և ընկերութեան ելեւթխելու ըլլալը :	28
Գ Լ Ո Ւ Խ . Թ . Արօնական մըտքերու վրայ դատանութիւն , և պաշտօնի և արարողութեց վրայ անտեղի բաներ :	55
1 . Գաժանութիւն :	անդ
2 . Գայթակղութիւն տուող արարողութիւններ :	69
Գ Լ Ո Ւ Խ . Ժ . Անցեալ դարերուն մէջ՝ ժողովուրդին պատուոյն (ըզգին) դէմ նախասինքներ :	76

Գ. Լ. ՈՒ. Խ. Օ.

Ընցեալ դարերուն մէջ՝ բարբերուն ավ-
րած և գէշցած ըլլալը:

Տեսանք որ՝ տգիտութեան առաջին պտուղն է
ուտելու և խմելու չափազանց սերը • հիմա պիտի
տեսնենք որ՝ երկրորդ պտուղն է իգասիրութիւնը •
Այս երկու պըտուղսալ հէմ՝ տնտեսութեան թըշ-
նամի են՝ հէմ բարուց:

Ասկէցալ յայտնի է որքան շնորհակալ պիտի ըլ-
լայ ժողովուրդը կառավարութենէն՝ որ հասարա-
կութեան կըրթութիւնը և ուսմունքը կը պաշտպանէ:

Բարոյական գրող հեղինակները հիմակվան վարուց
ավրըվելուն վրայ շատ մեծ գանգատներ կընեն •
հաւտըցընէլ կուզեն որ՝ հիմա մարդը տարիքը չա-
ռած տեսակ տեսակ ախտից մէջ կ'իյնայ • և ասոր
պատճառն է կըսեն կենցաղավարութիւնը: Եւ քիչ
կը մնայ որ՝ մեր նախնիքները հին Հռոմայեցուց

Վէստալ ըսված կուսանքներուն նմանցընեն * :

Նորերուկ զարդերու վրայ խօսած ատենըս ասոր մէկ ընդհանուր պատասխան մը տրվի . հիմայ կը մնայ տեսնել որ այն տեղ գրած պատասխաններնուս հաստատութիւնն մի կը գըտնեմք պատմութիւններէն , թէ կը սըտին մի : Փիլիսոփայական փաստէ մը բարակ զանազանութիւն գըտնելով պատասխան տալ և ազատիլը դիւրին է , բայց եղածները պատմվի նէ՝ պատասխան գտնելն ալ կը դժուարանայ :

Այս պատմութիւններըս չըրած իբէն ընթերցողէն հրաման կուզեմ՝ մինչև հիմա ըսածներէս մէկ պիտանի բան մը հետևեցընելու : Տեսանք որ անցած ատենները ուտելու և խըմելու սէրը չափազանց էր . և ասիկայ մէկ գործ մը նէ՝ որ հաստատուն և բազմութիւ պատմութիւններով ստուգած է : Եւ փորձով կը տեսնեմք որ՝ որկրամուտութիւնը մարմնական հեշտութիւններուն նկատեցընողը չէ , աւելի գրգռողն է . և գինովութիւնը համեստութեան և

Ծ * Ասոնք Վէստա ըսված կուսքին պաշտօնին յատկացած աղջիկներ էին , որ կուստանը մեջ նուիրական կրակը պիտի նայէին որ չի մարի . և քանի որ այս պաշտօնիս մեջ էին նէ՝ կոյս պիտի մնային . պաշտօնէն ելլէլէն ետքը կը ընային կարգը վիլ : Բայց պաշտօնին մեջն իբէն կուսութիւնը ալրըված ըլլար , կամ անհոգ կենային՝ և իրենց պահպանութեանը յանձնըված կրակը մարէր նէ ողջ ողջ կը թաղէին : Ասոնք միայն հում կը լային :

պարկեշտութեան ամէն ճամբաները և եղանակները կը մոռցնէ։ Ճանապարհորդները գիտած են որ՝ Ինկիլիշները թէպէտ այնքան չափազանց իգամոլ ալ չեն, գինով եղած ատեննին կընիկ մարդ տեսնեն նէ՝ պարկեշտութիւնը և համեստութիւնը մէկ դի կը ձգեն։ Ասոր համար է Ինկիլթէռոյի սովորութիւնը՝ որ կերակուրէն ետքը երիկ մարդիկ կենցաղավարութեան համար մէկ տեղ մը ժողվելին նէ՝ հոն կընիկ մարդ չի գըտնըվիր։ Վաթսուն տարվան գեղացի մը կը ճանչնամ, որ քանի՛ գինի խումբ և գլուխը տոբնայ նէ՝ կարգը վերու վրայ խօսք կը բանայ։ Եւ ասանկ ակտորժակներու մէկ մարդ մը ինքը զինք տալու՝ ոչ շատ կըթեալ ըլլալ պէտք է և ոչ բարակ միտք բանեցընել։ Հիմա պատմութեանց ցըցուցած գործքերը տեսնենք։

1 • Ուրիշ տեղալ ըսած եմ որ՝ շատ կին մէկէն առնելը՝ կըթեալ ազգաց մէջ խափանեալ է • անկիրթ կամ կըթուլութիւնը պակաս եղող ազգաց մէջ միայն կայ։ Եւ ասկէց կը հասկընամք որ՝ մէկ կին ունենալու հակառակ ցանկութեան շատ և սաստիկ ըլլալը՝ մարդոյս բնական խառնըլածքէն է պազի ոչ փիլիսոփայութիւն և ոչ անձաբանութիւն գիտցող հեղինակներուն ըսածին պէս քաղաքական կըթուլութենէ չէ։

2 • Վեսար կը պատմէ որ՝ Պռէթօններուն կընիկ մարդիկը ամէն մէկը տասն կամ տասն և երկու մարդու կին էին • մէկ եղբօր կինը մէկալ եղբայրներուն ալ հասարակաց էր • մարդ մը մատղաշ կին առնէր և

չափահաս տղայք ունենար նէ՛ այն կինը հէ՛մ հօրն էր հէ՛մ աղոցը : Եւ Պռէթօնները քիչ մը վայրենի ազգերէն տարբերութի՛ ունէին : Արկաթօքօքսուս անուն Պռէթօն իշխան մը՝ Հռոմ եկած ասենը Յուլիա կայսրուհին այս ամօթալից սովորութիւնս երեսին տրվաւ . իշխանը գործը սուտ չի հանեց . Հռոմայեցի կըմիկներուն ալ ծածկապէս այդ սովորութենէն շատ հեռու չըլլալը երեսը տրվաւ :

3 . Արևմտեան կայսերութիւնը կոխող բարբա-
րոս ժողովուրդներուն օրինաց գիրքերուն մէջ շատ տեղ կընիկ յափշտակելներ և սպրկեշտութե՛ գէ՛մ գործքեր ընէնէր կը պատմըլի : Եւ ասով հին պատմութիւններուն գիւրաւ կը հաւատամք որ՝ կըսեն թէ Հռոմայեցւոց նախնիքը իրենց կոպտութեան ժամանակը Սաբինացի աղջիկներ յափշտակեցին :

4 . Վերևի որ՝ հինգերորդ դարուն մէջ բարբա-
րոսները արևմտեան կայսերութեան վրայ յարձա-
կէլն ետքը՝ երկի մարդոց իրենց կինը ուրիշին տալու խայտառակ և ամօթալից սովորութիւնը շատ-
ցած էր . թէպէտ այս յանցանքըս զսպելու համար շատ սաստիկ օրէնքներ դրրված էին : Եւ ընկերու-
թեան այն վիճակին մէջն ալ բանը չէր կըրնար ու-
րիշ կերպ ըլլալ : Որովհետև մէկ կողմէն կը տես-
նենք որ չափազանց ուտել խմել կար . մէկ կողմէն ալ ժք դարէն առաջ արուեստները քիչ ըլլալով շահը շատ չէր : Ազնուականները և հարուստները գնելու կարողութիւն ունէին . աւաիկներն ու աղ-
քասներն ալ վաճառելու կարօտ էին : Այն ասեն-

վան ռամիկը ի՛նչ որ այս ճամբով կը վաստըկէր նե՛հ
հիմակվան ռամիկը նոյնը բանելով կը վաստըկի :

դար . Ը , և Թ : Մեծն Կարողոս կայսրը առանց
արտաքին երևոյթքերն ալ շատ պահելու ինն ան-
գամ կին փոխեց , և գոյթակղուծիւն ալ չի տըվաւ :
Ասիկայ կը ցըցընէ որ՝ միայն մէկ կին ունենալուն
պատուէրը որ քն կուտայ , այն ատենները հասարա-
կութեան մտքին մէջը տեղաւորած չէր : Կերևի որ
Գաղղիայի մէջ քանի մը վանքեր կային որ ողջա-
խոհութեան դէմ մեղքեր և տղայ անցընէլներ պա-
կաս չէին : Սուրբն Վոնիփակոս կը պատմէ որ՝ Ին-
կիլիզ ազգին խաթուններն ու կուսան կրօնաւոր-
ուհիները Հըռոմ ուխտի երթալով իրենց ողջախո-
հութիւնը կը կորսընցընէին : Անանկ որ՝ Քռանսա
և Լոմպառտիա քիչ քաղսք կը գըտնըվէր որ՝ այս
ուխտաւորներէն մնացած քանի մը բող չի գըտնը-
վէր հոն :

դար . Ժ : Պէթինէլի՛ 900 թուէն ետքը տգի-
տութիւնը մարդոյս բարուց վրայ ի՛նչ ազդեցութի՛
ընելուն վրայ խօսած ատենը կըսէ . տգիտութեամբ
գիրքեր , ուսմունք , և լեզուագիտութիւն կորսըվե-
ցան , և քրիստոնէական և քաղաքական օրէնքներն
ալ մոռցըվեցան : Քրիստոնէական վարդապետու-
թիւնն ու բարոյականը մինչև Ժողովոդեան հովիւ-
ներուն և եկեղեցւոյ պաշտօնեայներուն ալ մըտքէն
ելան . մանաւանդ թէ ավրոզը իրենք եղան : Ուստի
առաքինութիւններն ու մոլութիւնները իրարմէ
ատրքերէլու շատ բան մը չի մնաց , և շուտեան և

մարդաստանուծեան և ազգապղծութեան յանցանքները այնքան թեթևցան որ՝ հարուստները ըստակ վճարելով թողութիւն կը գըտնէին • հզօր մարդիկ առանց ստակիալ կըրնային թողութիւն առնել։ Բան գիտնալը՝ ծիծաղելի և պախարակելի բան մը եղած էր • նոյն իսկ օրէնքները և դատաւորներն ալ համարձակութիւն և ազատութի կուտային ասանկ գէշութիւններու։ Եւ ասոնց համարձակութի տալը այն էր որ՝ ասանկ ընողներուն դէմ մէկը ամբաստանութիւն ընէր նէ՝ ամբաստանողին ու յանցաւորին իրարու հետ մենամարտութիւն ընելու հըրաման կուտար • և ո՛վ որ կուլէն յաղթող ելլէր նէ՝ անիկայ յանցանք չունեցած կըլար։ Բւաղինա և Գեներբարդոս և Սդէլա և Բարոնիոս եկեղեցական պատմիչները կըսեն թէ՝ այս ատեններըս բողբը այնքան շատ էին, և խօսքերնին այնքան անցուկ էր որ՝ մեծամեծ պաշտօններ տալու մարդոց ընտրութիւնն ալ ասոնց միջնորդութե կըլար • եկեղեցական մեծեր ալ կըրնային գնել։ Ինկիլիզի Էտկառտ թագաւորը իր թագաւորութեան բոլոր մեծերը մէկ տեղ կանչելով՝ և մեծ ժողովք մը ընելով՝ այն տեղը ճառ մը խօսեցաւ • այս ճառիս մէջ բոլոր հասարակութեան գայթակղութիւն տըվող մոլութիւնները եկեղեցականաց վրայ կը ձգէ • և իրենց գինովութիւր և խաղ խաղալը և անպարկեշտ լըբութիւնը երեսնին կուտայ • և առանց խօսքով ծածկելու յայտնի կըսէ որ՝ եկեղեցականաց բնակարանները բողանոց են դարձեր։ Այս խօսքերէս

Ետքը սուրբ Տունսդան Եպիսկոպոսը ժողովքէն օգնութիւն գըտնելով հրաման ըրաւ բոլոր եկեղեցականներուն որ՝ կամ ողջախոհութիւն պահեն, կամ եկեղեցինին ձըգեն:

Դար • Ժա: 1003 Թուէն մինչև 1099 Թիւը քրսանէն աւելի եկեղեցական ժողովքներ եղած են որ եկեղեցականներուն անկարգ վարքը շետկելու զեցին, Թէ՛ քահանայներուն և Թէ՛ կրօնաւորներուն • այս ժողովքներուս կանոններէն կը սորվիմք որ քովերնին շատ ալ կընիկ մարդիկ կը գըտնըվէին • անհարազատ տղայքալ կունենային • և ամէնը մէկ տեղ կը բնակէին: * Քլէօռի եկեղեցական պատմիչը՝ Բավիայի ժողովքը պատմելով որ 1020 Թուին եղաւ կըսէ • « Այս ժողովքին վրայօք մեր ձեռքը « հասած պատմութիւնները մէկ ընդարձակ ճառով « և ատենախօսութիւնով մը կըսկըսին, որուն մէջ « պատը գանգատ կընէ որ՝ եկեղեցականաց անար- « ժան վարքը եկեղեցւոյն պատիւը և հարկինքը կը « պըզտիկցընէ կոր • և Թագաւորաց առատաձեռ- « նութենէն եկեղեցիներուն տըրված պարգևները « և ըստակները կը մըսխեն կոր յայտնապէս կընիկ

Ծա: * Գրիգոր է պատը՝ որ Հռոմայեցիք սուրբ տէյի կը տօնեն, այս գէշութիւններս խափանելու զեց • ասանկ ճամբայ երթալու սորված Եպիսկոպոսները կայսրը իրենց կըռնակ առին՝ որ ուրիշ պատճառով պատլին հետ սվըրված էր, և մեծ խոսվութի և արիւնհեղութի պատճառեցին:

« պահէլով՝ և անոնց զաւակները հարստացընելով: Զօրաւոր մարդոց ալ անպարկեշտութիւնը և անամօթութիւնը մինչև այն աստիճանը հասաւ որ՝ Ինկիլթէռա շատ կընիկ մարդիկ անոնց բղջախոհ կատաղութենէն ազատելու համար կուսանաց վանքը փախան՝ և մարապետի քօղ առին իրենց պատիւը պահէլու համար: Այս անկարգութիւններս պատճառ եղան որ ետքի դարերուն մէջ պապերը և արքեպիսկոպոսները և եպիսկոպոսները՝ վարդապետանոցները և ուսումնարանները * շատցուցին, որպէս զի միտքերնին բացվելով և աւելի բանի տեղեկութի ստանալով՝ տգիտութենէ առաջ եկած այսքան վարուց ապականութեան առաջը առնելի: Հասարակաց վարքին գեշութիւնը շատ մարդու ալ հաւտըցուց թէ աշխարհքիս վերջը մօտեցած է:

դար, Ժ՛ւ, Ժ՛բ: Նաւ մը ընկըղվելու վտանգի մէջ ըլլալը ծովեզեւքէն տեսնեն նէ՝ անոր օգնելու նաւ կը խըրկըլի վրանին: Մէկ մարդու մը վրայ զէնքով մէկը զարնելու վազէ՝ և այն մարդը պօռայ նէ՝ քաղսքին կամ այն տեղին պահապան զօրքը անոր օգնութեան կերթան: Ասոր պէս միջին դարերուն ատեններն ալ ասպետութեան կարգերը ելան որ կընիկ մարդոց պաշտպան կենան՝ անոնք յափշտա-

Ծ. ա. * Եկեղեցական ըլլալու մարդոց պէտք եղած բաները սորվեցընելու դպրատուններ կան Եւրոպիա, որ վարդապետանոց կըսենք. Իտալերէն Սէմինարիօ կըսեն, խօսքը ասոնց համար է:

կողմերուն ձեռքէն ազատեն, ինչպէս որ պահապան զօրաց գործը և նպատակն է գողերուն ձեռքէն հասարակութիւնը ազատել: Եւ բոլոր թագաւորութիւններուն և գաւառներուն մէջ այնքան ասպետներուն շատնալը և ցրուիլը կը ցըցընէ որ՝ ամէն տեղալ կանանց յափշտակութիւն կար և սովորականի պէս բան մը եղած էր: Գէշն այն է որ՝ նոյն իսկ պաշտպանութե՛ համար ելլողները իրենք ըսկըսան կընիկ մարդիկը և աղջիկները գլխէ հանել, և կընիկ մարդիկ թէ՛ պաշտպանութի՛ գըտնէին, թէ՛ յափշտակվէին, թէ՛ մարդու մը խօսքի խաբվելով գլխէ ելլէին, վերջերնին այն էր որ մէկ կուսանաց վանք մը կը մըտնէին, մէկ աբբասուհի մը իշխանութեան տակ կը դըրվէին. և այն վանքը մէկ կանանոցի (հարէմի) պէս բան մը կը լար: Ասոր առաջին հնարող եղաւ Գուլիէմոս Թ՝ Բուաթուի դուքսը, որուն համար պատմութիւնը կըսէ որ քաջ և քաղաքավար ասպետ մը նէր, բայց կընիկ մարդիկ կը խաբէր: Ամէն դարու վերջը մօտենար նէ՝ ժն դարէն սկսելով մինչև ժե՛ դարը, քարոզիչները աշխարհիս վերջը մօտեցած կը քարոզէին. այն ատենը ամէնն ալ դարձի գալով՝ ուրիշէ յափշտակածնին ետ կը դարձընէին. ինչք ըլլար, կընիկ ըլլար. ինչպէս որ կը գրեն նպատիւները: ՍէնՓօս պատմիչը կըսէ որ՝ « Այն երկիրները Նօրմանտացիներուն ձեռքէն պաշտպանելու համար ամէն տեղ շինված « բերդերուն տիրվածանքը այն կողմի մարդոցը այս « աւազակներէն քիչ պատիժ չեղան: Իրենց բեր-

« Դերուան աշտարակներէն աչքերնին դաշտին մէջն
 « էր • Ինչ որ տեսնէին նէ վրան կը վազէին • Ճա-
 « նապարհորդներէն անցնողէք (Թօբիթագրաստը)
 « կառնէին • վաճառականները կը մերկացնէին •
 « գեղեցիկ կընիկ մարդիկ տեսնէին նէ՝ անոնք ալ
 « կառնէին : Մարդ մը ասոնք տեսնելով կըրնար
 « ըսել որ՝ գողութիւն և կին յափշտակելը և բըռ-
 « նագատելը՝ այն ատենվան պարոններուն իրա-
 « ւունք մը եղած էր : Աղջիկները և կընիկները
 « վանքերուն քովերէն անցնելու աւելի ասպահովու-
 « թիւն մը չունէին • կրօնաւորները մէկ որս մը բըռ-
 « նելու ըլլային նէ՝ որսը ձեռքէ չի փախցընելու
 « համար վրայ եկողին դէմ կը կենային • և թէ որ
 « գլուխն շատ նեղի գար նէ՝ վանքին պատին
 « վրայ սուրբի մը մասունք կը բերէին • և այն ատենը
 « սովորաբար այն վանքին վրայ գացողները ջերմե-
 « ռանդ պատկառանքէ մը բռնըլելով ետ կը քաշ-
 « վէին • վրայ քալելու չէին համարձակեր : Նայն
 « մատենագիրը ուրիշ մէկ տեղ մը նալ ասանկ կըսէ •
 « Մէկ մը նալ ժգ դարուն վրայ աչք նետենք նայ-
 « ինք : Հազար կերպ անկարգութիւններով աղտո-
 « տեցաւ այս դարըս • որ ետքի դարերուն ալ օգ-
 « տեց : Այն ատենները անանկ եկեղեցականներ
 « կը տեսնըվէին որ՝ հագուստի անպարկէշտութեան
 « հետ աւելի պախարակելի վարք մը նալ կը միացը-
 « նէին • գինէտուն կերթային • գաղանամարտութե
 « և մենամարտութե տեղերը կը մըտնէին • և յայտ-
 « նապէս հարձ (օտալիս) կը սնուցանէին • այն ալ

« մէկ հատ մը չէ : Ծխի տէր քահանաները քովեր-
 « նին թուր կախած անանկ կելլէին ժողովուրդի
 « մէջ • վարուց կողմանէ կասկածելի կընիկներ
 « իրենց տունը կը քաշէին կառնէին • աշխարհական
 « դատաստաններու մէջ սրաշտօն կը վարէին • շահով
 « ըստակ կուտային • և այլն : Պազի վիճակներու մէջ
 « սովորութիւն էր պողընկութի ընող մարդը չափ
 « մը գինի կուտար ամէն տարի մինչև կենացը վեր-
 « ջը : Մէկ անգամ մը տուժարը (տէֆտէրը) անց-
 « նելէն ետքը մինչև մահուան օրը վճարելու էր •
 « կուզէր կամաւ՝ կուզէր ակամայ • նոյն մեղքը
 « գործելու կարողութիւն չունենարաւ նէ՝ նոյն
 « հարկը փալու էր :

դար • ժ ք : Մէկ կողմէն կիրակի բըռնելու օրերը
 հիմակվանին երեքին չափ կային • ուստի պարսպ
 կենալու շատ ատեն կունենային * : Մէկ կողմէն
 ալ կըրօնական բարեպաշտութիւնը անգիտութիւնով
 և օրէնքներով և սովորութիւններով ավրովելով
 բարուց սպականութիւնը շեակելու կարող չէր :
 1096 էն մինչև 1291 թիւը՝ որ այնքան մարդիկ
 կրօնական նախանձով վառված զէնք կառնէին սուրբ
 գերեզմանը իրենց իշխանութեան տակը առնելու

Ծ ք : * Վարդալու սէր՝ և անմեղ զբօսանքներ գիտ-
 ցըվի նէ՝ կիրակի շատ ըլլալուն փնասը միայն
 բանվորներուն կը դըստի • հարուստ մարդիկ թէ
 որ բարքերնին գէշ ըլլայ նէ՝ ուղած օրերնին
 կիրակի կըրնան բըռնել :

և պահպանելու համար, շատ գարշելի մոլութիւններու տեսարան եղաւ ամէն տեղ: Ուխտաւորներն ու խաչակիր զօրքը Եւրոպայի մոլութիւնները՝ Ասիայ և Ասիայիները՝ Եւրոպա տարին: Սուրբն Լուդովիկոս Քոստանայի թագաւորը իրեն բարեպաշտական և յիշատակելի ճանապարհորդութեանը ատենը ոչ իրեն առաքինութիւններովը, ոչ օրինակովը և ոչ զգուշութիւններովը չի կրրցաւ իր մարդոց անառակութիւնը և անկարգութիւնները զսպել: Նոյն իսկ իրեն վրանին (չատըրին) առջին բողբոս համար վրան հաստատուելը կը տեսնէր, և շատ սիրտը կը ցաւէր: Շատ հեղինակներ կը գրեն որ՝ բերդի և քաղաքի տէր պարոնները իրենց իշխանութեան տակը եղողներուն մէկը հարսնիք մը ըներն է՝ իրաւունք կը սեպէին՝ հարսը առաջին գիշերը իրենց տունը առնել, և այս սովորութիւնս քէց Եւրոպա մինչև ժէ դարը:

դար • ժԴ: Վարդոս գեղեցիկ ըսված իշխանին օրը Վաղքօնեայի պատմութիւնը անհարազատ զաւակներու և աղջկորդիներուն (բիճերուն) ոտք ելլելը կը պատմէ, որ ազնուականներէն առանց օրինաւոր ամուսնութեան եղած տղայքներն էին: Ասոնց ոտք ելլելուն պատճառն էր որ՝ իրենց հօրը բերդը հօրերնուն հարազատ տղոցը ձեռքէն առնեն, և գործերնին էր թալան ընել, հասած տեղերնին ավրըշտըկել, կընիկ մարդիկ յափշտակել և պատիւնին (ըռգերնին) ավրել, խաբէութիւն, և անանկ սրտոտութիւն մը որ նմանը միայն յուսահատ

մարդոց վրայ կը տեսնուի: Այս արիւննահեղ սատերազմը սաստիկ և յամառ եղաւ որ՝ Վարդուս Թագաւորին առջի բերանը խըրկած զօրքն ալ ավրեցին և ցրուեցին: Վերևի որ միջին դարերու մէջ ի՞նչ որ կարգաւ գիտէր կամ ուրիշին կարդացածը մըտիկ ընէլու ժամանակ ունէր նէ՝ կարդացածինն ծաղրական պատմութիւններ կամ կեղծեալ վէպեր (նօմանցօնէր) էին • և այս պատմութիւններս ալ շատ անառակ կերպով գըրված են որ՝ հիմա մարդ կամընչայ կարդալու • և կը ցըրեն են որ այն ատեն վան մարդիկը ի՞նչ անառակ էին որ գիրք գրելու կարողութիւն ունեցող մարդիկալ՝ որ ընդհանրապէս պարկեշտութեան սահմանը ռամիկէն աղէկ կը ճանչնան • ասանկ բաներ կըրցեր են գրել: Այս դիտողութիւնս շատ անգամ Պաքաչիւղի և ուրիշ կեղծեալ վէպ գրող Իտալացի հեղինակներու համար եղած է • բայց միայն Իտալացոց յատուկ չէ • Քոանսըններուն ալ թէ՛ արձակ և թէ՛ ոտանաւոր շինած պատմութիւնները՝ և Թաուպատու ըսված բանաստեղծներուն շարագրած երգերը ամէնն ալ սասանկ են: Մուսնական խոստումըքներուն և իրաւունքներուն ավրովիլը կտրիճութեան և գեղեցկութեան յատուկ բանիմը պէս կը պատմուի: Եւ կերևի որ՝ բարբերուն եվելզք ավրված ատենը, որ է Լուդովիկոս ԺԵ Թագաւորին օրը • Քրանսըղ պալատականները ինչ ազատութի՛ ունէին նէ • կատարեալ սասպեամը նալ գրեթէ հասարակաց հաւանութեամբ նոյն ազատութիւնը և համարձակութիւնը

ունեցածի սէս էր :

դար . ԺԵ : Փիլիսոսոս բարի ըսված ստորին գաւառներու կամ Քիլէմէնկի դուքսը՝ որ ոսկի գեղման ըսված ասպետութիւն կարգը հաստատեց 1430 թուին , և նոյն կարգին սրաշտպան դրաւ սուրբ Աստուածածինը և Անդրէաս առաքեալը , ուզեց որ այս կարգիս անդամները կամ ասպետները միայն քսան և չորս հոգի ըլլան . քանզի քսան և չորս կին կը սիրէր ինքը :

դար . ԺԵ , ԺԶ : Այս ժամանակներըս բարուց ասպետութիւնը այնքան ընդհանուր տարածված էր որ՝ Ինկիլիզի ը Հենրիկոս Թագաւորին առաջարկեցին որ շնութեան առաջը առնելուն մէկ հատիկ հնարք՝ յանցաւորը մեռցընէն էր : Երբ որ վարուց ավրվելու նշաններ կը տեսնուին եկեղեցականներուն մէջ՝ որ ժողովրդեան հովիւ և օրինակ պիտի ըլլան , իրաւունք ունինք ասկէց հետևցընելու որ ժողովրդեան մէջ շատ աւելի եղած պիտի ըլլայ : Եկեղեցական պատմութիւնները գըրողները իրենք ալ եկեղեցական ըլլալով կուզէին անոնց պատիւը պահել և անոնք անպատուելու համար այն ատենվան անկարգութիւնները չէին ուզեր պատմել . և երբ որ պատմել հարկ կըլլայ նէ՛ մեղմելով պատմած պիտի ըլլան , յանցանքին շատը ժամանակին բերմութիւն վրայ ձգելով . ասոնց խօսքին նայելով հարկ կըլլայ ըսել որ՝ ԺԵ և ԺԶ դարերուն մէջ « Եկեղեցականները թէ՛ քահանայ թէ՛ վարդապետ , ամենն ալ տգէտ և վարքերնին գէշ

« մարդիկ էին, որ իրենց վիճակին յատուկ պարտք
 « եղած բաներուն անհոգանալով՝ բողբուռ հետ կը
 « պըտըտէին, և իրենց եկեղեցական պաշտամունք-
 « ներու համար առած եկամուտնին՝ հացկերոյթ-
 « ներու կը խարճէին. և ասոնց վերջն ալ շնուծիւն
 « կամ պոռնկուծիւն էր” : Պատմիչները առհա-
 սարակ կըսեն որ՝ այն ատենի եկեղեցականներուն
 մէջ հասարակաց սովորութիւն եղած էր հարձ պա-
 հելը և սխմնականութիւնը : Ասոր համար Քօս-
 թանձա և Պաղիէա եղած ժողովքներուն մէջն ալ
 առ հասարակ ժողովական հայրապետները կը պօ-
 ռային որ բարքերը շիտկել նայելու է : Քլէմանսիս
 կըսէ՝ որ այն խեղճ ատենները վարուց ասպականու-
 թիւնը կուսանաց վանքերուն մէջ ալ մտած էր . և
 մէկ աղջկան մը զլուխը մարապետութեան քօղ ձը-
 քելը՝ որպէս թէ՛ անոր բողբուծիւն ընելու հրաման
 տալու պէս էր : Մեր ժամանակին համար այս դան-
 դատըս ընելու մարդ չի համարձակիր :

դար. ԺԷ : Սուբն Վարդուս Պոռսմեանին վարքը
 կարգալով կիմանալք որ՝ անոր ատենը Լօնկառաի-
 այի մէջ (Միլանի երկիրը) գըտնըվող քահանաները
 և վարդապետները ի՞նչ աստիճան ավրած վարք ու-
 նէին . և ասոր հաստատութիւն մը այն կուտայ որ՝
 անառակները և անպարկեշտ գործքերը շատնալուն
 համար շատ կուսանաց վանքեր գոցել տրվաւ այս
 արքեպիսկոպոսը : Ումիլիաթի ըսված կրօնաւորաց
 կարգը՝ որ իրենց անկարգ ընթացքովը առ հասա-
 րակ ժողովրդոց գայթակղութիւն տալով՝ անուանի

եղած էին , սուրբ Կարողոսին ըրած բարեկարգու-
 թիւնները չուզեցին : ուստի Քառինա անուն մեկ
 կրօնաւորի մը սիրտը հաճեցուցին որ՝ արքեպիսկո-
 պոսը իրեն ժամատունն իքէն՝ ասիկայ հրացանով
 զարնէ : զարկաւ՝ բայց գնտակը Կարողոսին չի դպաւ :
 Այս ընողը և ուրիշ երեք կրօնաւոր ալ անոր հետը
 մեռցուցին : 1659 ին՝ Աղէքսանդր Է պապին օրը
 Հռոմ գիտեցին որ՝ շատ մատղաշ հարսեր քիչատե-
 նի մէջ այրի կը մնային , և սր երիկ մարդ որ կընկա-
 նը աչքէն ինկած էր՝ շատ չէր ապրէր , կը մեռնէր :
 Ասոր համար շատերը կասկած ըրին քանի մը մատ-
 ղաշ կընիկներու ընկերութեան վրայ : Սիչիլեայի
 Թագաւոր զ՝ Կարողոսին բժիշկը Կառէլլի անուն՝
 այն ատեններն է որ անուանի Հօֆման բժշկին այս
 նամակըս կը գրէ : « Թուներու համար եղած սխալ
 և կարծիքներու վրայ ձեր շինած ճարտարախօս ճա-
 ւառ , մեկ երկան ատենի մէջ ներգործող Թոյն մը
 և միտքս բերաւ , որ մեկ Թոյն շինող գարշելի ար-
 և ուեստաւոր մը՝ որ մինչև հիմա Նաբօլի քաղա-
 ւ քին բանտին մէջ կը կենայ , 600 մարդէն աւելի
 և ըսպաններ է այն Թիւնովը » : Ամենևին երկբայ-
 ութիւն չի վերցընէր որ՝ դէպ ՚ի ժէ դարուն կէ-
 սերը ասանկ Թոյն շինելու և ծածկապէս մարդու
 տալու և սպաննելու սովորութիւնը շատ տարածած
 էր Հռոմ և Նաբօլի : Քռանսայի մէջ , և մասնաւոր-
 րապէս Փարիզ քաղաքը էն ծայրի աստիճանը հա-
 սած էր 1670 Թուին : 1679 ին մասնաւորապէս
 այս յանցանքովս բռնիւրվողները պատժելու համար

811

յատուկ ատեան մը սահմանեցին , և անուը դրին շահող քը բօաշօն , Թուռնի սենեակ : Էքսիլի անուը մէկ Իտալացի մը՝ որ Հռոմ քաղաքը Թոյն կը շինէր և կը ծախէր , հարիւր յիսուէն աւելի մարդ Թուշաւորեր և սպաններ է Հռոմացու մէջ տէյի ամբաստանվեցաւ՝ Ժ Իննովկենտիոս պապին օրը , ժէ դարուն մէջ :


Նիմ քաղաքի եպիսկոպոս անուանի Քլէշիէ հեղինակին վկայելովը՝ « Քուանայի ժէ Լուդովիկոս Թագաւորին փառաւոր օրերը (1665 ին ա տենները) Օվէռներ գաւառին Թագաւորական և ատեանը 12000 ամբաստանութի եղած է ամէն և տեսակ յանցանքներու վրայ” : Ասիկայ պատմէլէն ետքը հեղինակը կըսէ որ՝ շատ անգամ ամբաստանողն ու վկայները ամբաստանեալներէն աւելի յանցաւոր էին : « Ասանկ բերդի տէր եղող ահարկու և մարդոց մէկը Բօնիօ Շաթօ ըսված տեղի իր աշտարակներուն մէջ տասն և երկու սրիկայ կը պահէր , որ անոր հրամանովը ամէն տեսակ գէշութի և կըրնային ընել , և իմ տասն և երկու առաքեալներս և են ասոնք կըսէ” : Տիւքրէօ աբբայն՝ որ Քլէշիէի գործքերը տպել տրվաւ , այս բանիս վրայ մէկ քահանայ մը կը յիշէ որ սոսկալի յանցանքներու համար դատապարտըվեցաւ , և կը ցաւի որ այն ատենվան տգիտութիւնն ու վարուց ապականութիւնը ընկերութեան որքան վնասներ տրվին , ինչ չարիքներու մէջ ձգեցին : Մէկ օրվան մէջ երեսուէնէն աւելի մարդ պատժըվեցաւ :

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆ

Գ Լ Ո Ի Խ Ե Է

Նոյն նիւթոյն վրայ :

Արդարութիւնը կաշառքով ծախելը և սուտ երգում ընելը՝ կամ երգումսով տրված խօսքին վրայ չի կենալը, որ անցեալ դարերու մէջ խիստ շատ էին, առաքինի վարուց նշան չեն : Հոս ալ ասոնց վրայ խօսիմք :



1. ԱՐԴԱՐՈՒԹԻՒՆԸ ԿԱՇԱՌՔՈՎ ՃԱԽԵԼԸ

1. Ս՝եծն Ալֆոէտոս Ինկլիլիզի թագաւորը ը դարուն մէջը՝ միայն մէկ տարվան մէջ քառասուն և երկու դատաւոր մեռցուց՝ որ կաշառքով արդարութիւնը ծրուէր էին :

2. Պետրոս Վէռուի կոմսը՝ Ժ և Ժմ դարերուն սովորութեցը վրայ խօսելով կըսէ . « Մեր օրերս և մէկ դատաւոր մը իրքան թշուառական և արծաթասէր ըլլայ նէ՝ չի կըրնար այն աստիճան լըբութեան հասնիլ որ՝ դատաստանական վճիռը և ըստակով ծախելը առանց ամըշնալու պատմէ :

« Այն տտենները Օթօն կայսրը հին մէկ դժուար-
 « րութիւն մը չի քաշեց 1001 թուին գըրված
 « հրովարտակին մէջ յայտնի գրելու որ՝ Թօռթօ-
 « նայի եպիսկոպոսին և Ռիքառտ անուն մէկի մը
 « մէջ եղած կռիւը դատելուն և վճիռը արդարա-
 « պէս տալուն համար վէճ եղած ըստակին կէսը՝
 « Թօռթօնայի եպիսկոպոսին ձեռքէն առի : Ասկէց
 « դիւրին է ճանչնալը որ այն տտենը օրէնքները և
 « բարուց կրթութիւնները և գիտութիւնները ինչ
 « վիճակի մէջ էին :

3 • Նոյն ժամ դարուն մէջ՝ Եդուարդ խոստովա-
 նող ըսված Ինկիլիզի Թագաւորը, թէ և շատ աղէկ
 բնութիւն ունէր կըսեն պատմիչները , չամբնցաւ
 իրեն դատողութիւններուն մէկուն մէջ որ մինչև
 հիմա կը կենան , վէճ ընողներուն մէկ կողմէն առած
 գեղեցիկ ընծայն պատմելու , և տրված վճռոյն պատ-
 ճառ ալ այն ընծայն ըլլալը իմացընելու :

4 • Ինկիլթէոսայի մէջ Թագաւորական տտեան-
 ներուն դատաւորները արդարութիւնը ծախելուն
 համը այնքան փախուցին որ՝ 1289 թուին իբրև
 յանցաւոր ամբաստանութիւն եղաւ անոնց համար
 բաւլամենթին առաջը • որ յանցաւոր են տէյի վըճ-
 ուց , և ամէն մէկին յանցանքին համեմատ տուգանք
 առաւ : Տէրութե առաջին դիւանադըպիրը (քան-
 չէլիէոը) Ադամ Սդաթթօն անուն՝ իրեն համար
 34000 մառք տուգանք տրվաւ , որ 34000 լիբէ
 սդէռլին կընէ , (74800 քէսէ ըստակ) : Ուրիշ
 դատաւորներուն տրված տուգանքը մէկ միլէօն լիբէ

սոգէս լինի հասաւ : Այս խտուածեանս վրայ ալ դա-
 տաւորներուն խելքը գլուխնին չեկաւ . քանզի այն
 ատենէն ետքն ալ անոնց կաշառառութեանը դէմ
 աղերսագիրով բողոքներ կը գըտնըվին : Մալմբու-
 սուրբի կրօնաւորը կը վկայէ որ՝ 1319 ին՝ թագա-
 ւորական ատեանները նստող ամէն դատաւորները
 և տէրութեան ամէն մեծամեծ գործակալները՝ հիչ
 մէկը դուրս չի հանելով՝ նվ եվել ըստակ տարնէ՝
 սրգարութիւնը և իրաւունքը անոր կուտային . և
 ամէնն ալ շատ ատելի անկարիաներու գործ կածէին
 ժողովուրդը : Եւ թէ որ մտածենք որ թագաւոր-
 ներն ալ իրենց օրինակով այս կերպ բաներուս ուժ
 կուտային՝ այս բաներս զարմանք չեն բերեր : Պատ-
 մութիւնը կըսէ որ՝ ժե և ժղ դարուն մէջ՝ Ինկի-
 լիզի ճիւղի ըսլած ատենակալները առ հասարակ
 կաշառք կառնէին . և անամութութիւննին ամէնուն
 յայտնի իբէն՝ նորէն շենրիկոս է թագաւորէն սիրտ
 և քաջալերութի առին, որ իր հպատակներուն դէմ
 անօրէն դատեր կը հանէր : Ժա Դարուն մէջ Ինկի-
 լիզներուն վրայ տիրող թագաւորներուն համար
 Հանուի պատմիչը ասանկ կը խօսի . « Այս ատեն-
 աներըս Ինկիլիզի թագաւորներուն հարստութե
 և առատ աղբիւրներուն մէկն էր տուգանքը (ճէրի-
 և մէն) և պարգևները և կաշառքը, որ իրենց հպա-
 ւտակներէն կառնէին : Այս թագաւորներուն
 և պատուական ընծայներ տրրվելու առիթները՝ մե-
 և կիկ մէկիկ պատմելը հատնելու բան չէ : Առանց
 և ըստըկի կամ առանց սուղ պարգևի մը թագա-

« ւորէն հիշ մեկ բանի մը ազատութեան հրաման
 « առնըվել անհնար էր : Իրաւունք վաստըկելու և
 « արդարութիւն իրենց կողմը առնելու համար շատ
 « քաղաքացիք շատ ըստակ տալու կը պարտաւորէ-
 « ին : օրինօք դատաստան ելլելու կարողութիւնն
 « ալ ըստըկով կըլար : հակառակ կողմէն ալ արքայ-
 « ին կաշառք կուտային որ հրաման հանէ , դատա-
 « ւորին կողմէն զինքը բընաընդունելէն ազատի ,
 « դատաստանի չելլէ : Շահնալ իրենց առնելիքին
 « կէսը կամ երեք մասին կամ չորս մասին մեկը թա-
 « գաւորին կուտային որ առնելիքնին բուսցընէ :
 « Մէկ խօսքով ըսենք , այս թագաւորներս արդա-
 « րութիւնը և իրաւունքը բացէն իրենց հպատակ-
 « ներուն կը ծախէին , ասոր համար մեծ ատեանին
 « վճիւրը հարկաւոր եղաւ , որ արդարութիւնը ծա-
 « խել և ուշացընելը և ժխտելը յատուկ սահմա-
 « նադրութիւնով արգիլէց : Թէ՛ եկեղեցական և
 « թէ՛ աշխարհական հիշ մեկ աստիճան մը առանց
 « ընծայի չէր առնըվեր : Եւ քանի մի թագաւոր-
 « ներու ատեն եպիսկոպոսական աթոռներն ալ ծա-
 « խու ելան , և եվել ըստակ տըվողները միայն կըր-
 « ցան այն վիճակներուն տիրել : Հիշ մեկ գործ մը
 « չկայ , որքան ցած և սրտուոյ պըզտիկութիւն բե-
 « րող ալ ըլլայ , որ մեր այս ատենվան թագաւորնե-
 « րուն մեկը ոսկի վաստըկելու համար ձեռք զար-
 « կած չըլլայ , ընծայի անունով ի՛նչ ըլլարնէ կառ-
 « նէին , շուն , բազէ , հաւ , լոբէնատա , սառտէլա , և
 « տահա ինչ ցած և ոչինչ բան ըլլար , թէ որ տը-

« Վողը սուղ բան մը տալու կարողութի՛ն չունենար
 « Եւ՛ տալու կարողութիւն ունեցածին կը շատնայ-
 « ին : Իրենց սէրը և ատելութիւնն ալ ծախու էր •
 « մէկուն կողմէն և մէկալին դէմ՝ ըլլալը, մէկը սիրե-
 « լը և մէկալը ատելը արծաթով ըլլալու բաներէն
 « էր : Անոնց ամօթը մըշանջէնաւորելու համար այս
 « բաներս ամէնն ալ նոյն թագաւորաց դիւանական
 « տուճարներուն մէջ արձանագրած են • ամէն բան
 « այն ատենը ըստակով ըլլալը՝ այդ դիւանական
 « մատեաններէն գիտենք :

Այն գաւառներուն մէջ՝ որ դատողական իշխա-
 նութիւնը թագաւորներէն բերդի տէր ելող պա-
 րոններուն ձեռքը անցած էր , ասոնք այս գործըս
 ընկերութեան համար վճարելը մէկ պարտաւորութի՛ն
 մը սեպելով չի վարվեցան , իրենց իշխանութիւնը
 և հարստութիւնը եվելցընելու միջոցի մը պէս բռ-
 նեցին • ուստի իրենց իշխանասիրութե՛նը և հպար-
 տութեանը և ագահութեանը ուզածին պէս բանե-
 ցուցին այս պաշտօնը : Դատաւորական պաշտօնը՝
 տուրք առնելով իրենց հպատակներուն ընչիցը վճ-
 նաս տալու , և բանտը դնելով ամէն մէկուն անձնա-
 կան ազատութիւնը վերցընելու , և ցած և անարդ-
 պատճառներու համար անուննին կոտորելու , և մէկէն
 ըստակ առնելով՝ անմեղ մարդ մը անոր ոտքին տակը
 տալու գործածեցին , և այլն :

Այս կերպով հասարակութեան վարքը ավրելե-
 լէն երկու բան առաջ եկաւ իրարու հակառակ :

Ինկիլթէռուայի մէջ մասնաւոր անձանց ընկե-

րուծիւններ ելան՝ և հարիւր տարիէն եվել քը-
շեցին, որ մեջերնին մէկը ուրիշի մը հետ դատ ունե-
նար նէ՝ անոր օգնութիւն կընէին, կամ դատաւո-
րաց տըված վըճիւրը կոչընչացընէին, կամ այն վը-
ճիւրին գործադրութիւնը կը խափանէին:

Քռանսա շատ ազատ մարդիկ այնքան անկարեա-
ներէն յուսահատելով՝ իրենց ազատութիւնը ձգե-
ցին, գերիի կարգ մտան, որ իրենց պաշտպանելէն
օգուտ քաղելու մտօք՝ իրենց թեր կայնելու կըռ-
նակ մը ունենան:



2 . ՍՈՒՏ ԵՐԴՈՒՄ ԸՆԵԼ

Պատմութիւններուն մէջ շատ սուտ երդումներ
եղած կը կարդամք, և ասով կը հասկընամք որ՝ այն
ատենները կրօնքը սիրտերնուն և հոգիներնուն մե-
ջը թափանցելով տիրած չէր, միայն արտաքին երե-
ւոյթքը բաւական կը սեսպլեր: Ասոր քանի մը օրի-
նակներ դնեմք:

1 . Քռանսայի Ռօսպէռ թագաւորը Թ դարուն
մէջ՝ տեսնելով որ սրբոց մասունքներուն վրայ շատ
սուտ երդումներ կըլայ, և ինչպէս որ կերևի՝
սրբոց մասունքին վրայ ըլլալը երդումին սուտ ըլ-
լալէն աւելի իրեն գայթակղութի տալով՝ հրաման
ըրաւ որ՝ մէկ բիւրեղէ (պիլլուռէ) մասունքի աման

մը շինեն, և մեջը մասուէք չի դնեն, և երդում տալու համար անիկայ հանեն որ հիշ որ չէ նէ՝ յանցանքը միայն սըտերդ-մնութիւնը ըլլայ, հետը սրբապղծութիւն ալ չի խառնըվի, և դիտաւորութիւնով մեղանչէ ալ նէ՝ գործքով չի մեղանչէ :

2 • Պետրոս Վէռոի կոմսը՝ Ժ և Ժն դարերուն համար խօսելով կըսէ • « Այն ատենը ամէն գործողութիւն շարժիչը (զէմպերէկը) միայն կըրօնքն էր • բայց այս ըսած խօսքս ալ ճիշդ չէ : Միայն « կրօնքին արտաքին երևոյթքը ամէն բան կընէր • « ճշմարիտ կրօնքը հիշ մեկին հոգը չէր : Խօսքին « վրայ չի կենալ, մարդ սպաննել, օտարին ինչքը « ավրել կամ իրեն առնել, զրպարաւել, ոտքի տակ « առնել, ասոնք առ հասարակ ամէնուն գործքն « էին • մեկուն ալ սոսկում չէր գար : Ասոնցմէ ետ- « քը՝ կրօնքին արտաքին արարողութիւնները պա- « հելու շատ զգոյշ էին • և ասոնց այս գործը՝ նոր « հասարակապետութեան հետեւողներուն կատաղի « բարկութիւնը ինջեցընելու պատճառ ալ ըլլալու « աղէկ կուգար, որ իրաւը ըսենք նէ՝ ազատ ըլլա- « լու ալ արժանի չէին, որովհետև իրենց ազատու- « թեամբը իրենց անձինն ալ կը մնասէին՝ իրենց « մերձաւորներուն ալ :

3 • Այն ատենվան ազխտութիւնը՝ սուտ երդումներու ընդարձակ ասպարէզ (մէյտան) տըվաւ • քանզի գրեթէ հիշ մեկը գրել չգիտնալով՝ և եղած բաները գրով պահելու անհնար ըլլալով՝ հարկ եղաւ բոլորովին վկայներուն վկայութեանը ապաւինիլ, և

պէտք եղած ատենը այն վկայութիւնն ալ իրենց օգտին դարձընել: Վկայներուն մէկուն դէմ ամբաստանութիւն մը, կամ մէկը անոնց բանմը հարցընելու ըլլար նէ՛ այն դժուարութենէն ալ երդումով կազատէին. նոյնպէս կողմերուն մէկին համար ալ ամբաստանութի՛ եղած ատենը՝ այն յանցանքէն հեռու ըլլալուն վրայ ինքը երդում ընելէն ետքը՝ վկայն ալ կերդվըննար:

Դատին մեծութեան համեմատ վկայներուն համբանքն ալ կեվէննար. և մահուան արժանի մէկ յանցանքի մը դատ ըլլար նէ՛ մինչև 72 հոգի վկայ կուզվեր: Երբ որ Քոստանդի Քոնտէկօնտա թագուհին՝ որ զ դարուն մէջն էր, ամբաստանեցաւ որ իր տղան Քլօթէո՛ իր հարազատ երկընէն չէ՛, որ էր Շիլբերիք, և այն ատենը մեռած էր, թագուհին այն տղուն հայրը Շիլբերիքը ըլլալուն վրայ ինքն երդում ընելէն ետքը՝ երէք հարիւր ալ վկայ գտաւ երդում ընող. երէքն ալ եպիսկոպոս էին: Ահա երէք հարիւր վկայ մէկէն, որ իրենց չի կըրնալ գիտնալու բանը երդումով վկայեցին: Քաղաքական դատերուն մջ վրկայներուն համբանքը տահա եվէլ կըրնար ըլլալ: Ասոնք երկու խումբ զօրքերու պէս կը շարվէին, միայն մէկ կողմէն երբեմն մինչև հազար հոգի կըլար: Այս վկայներուս աջ ձեռքը մէկ զէնք մը կըլար, որպէս թէ օրինաց հրամանը խափանել տալու համար, որ քաղաքական կրթութեան տակ մտած ազգաց մջ ուժին կողմը չի նայիր, իրաւունքը ո՛ր դին ըլլալը կը նայի: Դատաստան վա-


րելու այս յիմարական կերպըս է դարուն մէջ Եւրոպա խօթեցին բարբարոսները , և սագի գաւառներու մէջ մինչև ժ՛ղ դարը քըշեց . և այս ատեններըս շատ մարդ կը գըտնըվէր՝ որոց արուեստն էր դատաստանատունները երթալ երդում ընել և վարձք առնել դատին տիրոջմէն : Այս յանցանքիս մնացորդները մինչև հիմա կը տեսնըվին Ինկիլթէռաւ որ վկայներու խօսքի վրայ դատաստան տեսնելու անտեղութիւնները աղէկ մը վերցըված չեն հոն :

4 • Թագաւորներուն և կառավարութեան գործոց սլաշտօնատարներուն երդում ընել և երդումին վրայ չի կենալ՝ պատմութիւններուն մէջ լեցուն է • և հասարակութիւնն ալ ասոնց այսպէս ընելուն հիշմէկ կը շտամբութիւն մը և բողոք մը չէ ըրած • ասիկայ հասարակաց միտքը աղէկ մը ավրած ըլլալուն նշան է : 1398 Թուին՝ Ինկիլիզի տէրութե՛ բոլոր մեծամեծ ատենակալները թէ՛ եկեղեցական և թէ՛ աշխարհական՝ Շրաւպըրի քաղաքը անուանի հանդէս և ժողովք մը ըրին , որ պատմութիւններու մէջ մեծ բաւլամէնթ անուանով կը յիշվի • և ամենն ալ Քէնթըրբըրի եկեղեցւոյ խաչին վրայ երդում ըրին հանդիսիւ որ՝ այն ժողովքին մէջ եղած կանոններուն և օրէնքներուն հիշմէկը փոխվելու թող չի տան : Տահա երկու տարի լըման չանցած՝ այս նախարարներս էին՝ որ այն ժողովքին օրէնքները ամինը մէկէն վերցուցին ոչընչացուցին :

5 • Երդումները աւելի հանդիսաւոր ընելու՝ և սլաշտօնութիւնը ամըրցընելու համար շատարարո-

զուժիւններ հնարվեցան , բայց պարսպ տեղը :
 Այս արարողուժիւններուս մէկը այն էր որ՝ եր-
 դում ընողը ազնուական մարդ ըլլար և որսորդու-
 թեան շատ սէր ունենոր նէ՝ երդում ընելու ա-
 տենը մէկ փաստան (սիւլիւն) մը մէջ կը բերէին :
 Փիլիպպոս բարի ըսված Պօսկօնեայի դուքսը 1453
 ին՝ մեծ հացկերոյթի մը մէջ՝ բոլոր իր պալատական-
 ներուն ներկայութեանը մեծ հանդէսով մէկ խոր-
 ված փաստան մը բերել տրվաւ . և ձեռքը անոր
 վրայ դնելով՝ և ընելու երդումըս ավրեմ նէ՝ սանկ
 ըլլայ նանկ ըլլայ տէյի՝ իր անձինը վրայ շատ չա-
 րամաղծուժիւններ ընէլէն ետքը երդում ըրաւ որ
 զէնք առնէ տաճկաց հետ պատերազմի ելլայ . բոլոր
 պալատականներն ալ նոյն արարողութեամբ երդվըն-
 ցան հետը երթալու . ո՛չ ինքը գնաց և ո՛չ պալատա-
 կանները : Մէկ խորված փաստան մը երդումին ա-
 ւելի ուժ և հաստատութիւն կուտայ տէյի կարծիք
 ընելը՝ մէկ մասնաւոր պարզամտութեան գործ մը
 նէր . բայց պատմութիւնը շատ օրինակներ կը ցը-
 ցընէ որ՝ այս պարզամտութիւնս ստելէն զատ՝ չա-
 փազանց անամօթութի մը նալ կը ցըցընեն որ ետքի
 ատեններուս պատմութիւններուն մէջ օրինակը չի
 կայ : Քռանասոյի Շիւքերիք թագաւորը՝ որ զ՝ դա-
 րուն մէջ թագաւորողներուն մէկն էր , երդում
 ըրաւ որ՝ մինչև որ իրեն երկու եղբարցը հաւա-
 նութիւնը չըլլայ նէ՝ Փարիզ չի մըլանայ . և թէ որ
 մըլանայ նէ՝ սուրբ Պողիքղէտիոսի և սուրբ Մար-
 աինոսի և սուրբ Իլարիոսի նշովքները վրան ըլլան :

և այս սուրբերըս իրեն երգմանը երաշխաւոր (քէ-
 Ֆիլ) բռնեց: Եղբայրներն ալ թագաւոր էին:
 Այս երգումըս ըրած իքէն ալ այս թագաւորը՝ որ
 անօրէնութեամբը հասարակաց գայթակղութիւն
 կուտար, և մինչև անսմութեան աստիճանը աւելոր-
 գապաշտ էր, Փարիզ մըսնեւ ուղէլով իր առջևէն
 ուրիշ սուրբերու մասունքներ տանեւ տըվաւ, կամ
 կարծելով որ այս սուրբերը իրեն պաշտպան կըլլան
 չեն թողուր որ՝ երաշխաւոր բռնած սուրբերը
 վրէժխնդրութիւն ընեն, կամ անանկ կարծել ցը-
 ցընելով հասարակութիւնը խաբելու համար:



Գ Լ Ո Ւ Խ Բ

Մնցեալ դարերուն մէջ՝ հասարակութե
 և ընկերութեան եվելօք խեղճ ըլլալը:

՞ . Օ ինուորսկան և պատերազմի վերաբեր-
 եալ կրթութիւնները՝ որ ք գլուխին մէջ խօսե-
 ցանք, պարսպ կենալու ժամանակը մէկ զբօսանք մը
 նէին . յափըշտակութեան մէկ միջոց մը նէին . և
 ասոնցմէ զատ՝ այս կրթութիւններըս հարկն ալ կը
 պահանջէր որ ըլլային: Եւ յերաւի բարբաբոսու-

Թեան ժամանակը՝ որ կառավարութիւնը կարգի կանոնի տակ մտած չէ, մարդ միայն իրենմէ կըրնայ պաշտպանութի գլխակէլ. ինքը զինքը պաշտպանել: Մէկէն անիրաւութիւն մը տեսնէնէ՝ գատաստանի տեղ չկայ որ երթայ հոն բողոք ընէ և իրաւունք ստանայ: Հասարակութիւնը ուժ մը չունի որ՝ իրեն վրան մէկը գայ բռնութիւն ընէնէ՝ այն ուժը իրեն պաշտպան կենայ: Հարկ կըլլայ իր վրան եկողը ետ հրելու կամ հախէն գալու համար իր ուժին ապաւինիլ. ուստի յանկարծ չի գլանըվելու և տակ չերթալու համար ամէն ատեն իր ուժը կրթել տալ պէտք կըլլայ: Բայց որովհետև իր վրան վազողին ուժը սովորաբար իրեն դէմ դնելու և ինքը զինքը պաշտպանելու ուժէն վեր կըլլայ, և կարելի ալ է որ՝ թէ արթուն իքէն և թէ քնացած ատենը յանկարծ թշնամին գայ զինքը կոխէ, ասոր համար միշտ երկիրդի մէջ է, և անանկ ալ ըլլալը հարկ է: Միայն այս վտիւրս բաւական է ցըցընելու որ Ռուսո և Ռայնալ՝ որ վայրենիներուն վիճակին շատ կը հաւնին և կը նախանձին, իրաւունք ունեցած չըլլան: Ընկերութիւնը քիչ մը շատնայնէ՝ տահա կառավարութեան մը տակ չի մըտած իքէն, մինակ իրեն ուժովը կատարեալ վրէժխնդրութիւն չի կըրցող ընող մարդը իր բարեկամներն ալ իրեն օգնական կը բըռնէ: Ասկէց մասնաւոր ընկերութիւններ և գաշնագրութիւններ կըլլան՝ թէ իրար պաշտպանելու և թէ ուրիշի վրայ յարձըկելու մտօք, և այն ընկերութիւններուն անդամները ամէնը մէկ կիր-

քով զինեալ կըլլան։ Այսպէս եղած ատենը պատիժը յանցանքին համեմատ չըլլար բնաւ։ Մարդիկ կատղելով և իրենց դատին դատաւորն ալ իրենք ըլլալով՝ ոչ գթութիւն կը հասկընան և ոչ արդարութիւն։ Մարդ ինքն իրեն նեղանալով ամէն մարդ և ամէն բան իրարու հետ կը շփոթէ . հօրը ըրած յանցանքին համար տղան կը պատժէ . երկանը բան մը չի կըրնալով ընել՝ կընկանն անուանը կը քաշքըշէ . մէկ եղբայրը պիտի մեռցունէր և ձեռքէն փախցուցնէ՝ մէկալ եղբայրը կսպաննէ։ Ասանկով սաստիկ ատելութիւններ կըլլան և տըներ իրարմէ կը բաժնըվին . ատելութիւնը որդւոց որդի ժառանգութեան պէս կը մնայ . և արիւնով միայն կըրնայ մարիլ։ Ե՛ր Գարէն մինչև ժամ դարը բոլոր Եւրոպա ասանկէր . բայց տեղ տեղի վրայ տարբերութիւն ունենալով։ Միտքըդ բէր՝ ինչպէս որ Պէթլինէլի կըսէ . « Որ ամէն մարդ զէնքով կը պըտըտէր կամ « ինքը զինք պաշտպանելու՝ կամ ուրիշին վնասելու համար . սա դիս ան դին թափառական կը շըր-« ջէին . ոմանք իրենը կամ ուրիշինը ձեռք ձըգելու « համար . սմանք իրենց պէտք եղած բանը սասանա-« լու համար . ոմանք պատերազմ փընտըռելու և « ծառայելու համար . ոմանք բերդերու վրայ յար-« ձըկելու՝ և ոմանք ալ բերդերը պաշտպանելու « համար . ամէն մարդ կամ նոր բերդ մը շինելու՝ « կամ մէկ հատ մը ըստանալու կը հոգնէր աւելի « ուժով և ապահով ըլլալու համար . և մինչև հիմա « գրեթէ ամէն լեռներու գլուխ ասանկ բերդերու

« մնացորդներ կը տեսնուիին , որ քաղաքական սյա-
 « տերազմներէն ետքը շատ եվելցան :

Բ , Քանի որ բարբարոս ազգերը եկան և դա-
 րուն մէջ արևմտեան կայսերութիւնը ավերեցին նե՛-
 այս ըսածներըս ուրիշ կերպ չէր կըրնար ըլլալ :
 Ի դաւիա դեսնի տէր եղալները իրենց ունեցածին
 երէք մասին մէկը այս նոր եկողներուն պիտի տայ-
 ին . ուրիշ գաւառներ՝ երէք մասին երկուքը կու-
 տային : Պատերազմի կրակին՝ ամէն մէկ մարդուն
 ունեցածին դատաստանական Թուղթերուն արձա-
 նագրութիւնները (հիւճճէթներուն խայտը) մոխիր
 դարձան ոչընչացան . տգիտութիւնը՝ եկամուտնե-
 րու և ծախուց վերաբերեալ տումարներուն չի կըր-
 ցաւ սրահպանութիւն ընել . հասարակաց մէջ տիրող
 անկարգութիւնն ալ ասոր դէմ կը դընէր . ուստի
 այն ատենները որ կարդալ գրել գիտցող մարդ չէր
 գտնուիլ , իրական և մասնաւորաց իրաւունքներուն
 հի՛չ մէկը հաստատութիւն չունէին . հի՛չ մէկը իր
 ունեցածին տէր ըլլալը չէր կըրնար ստուգել . ամէն
 տըներու մէջ հազար կերպ կռիւ ելլելով՝ բաժան-
 ման սրտաճառ մընալ այս կըլլար : Բարբարոսնե-
 րուն մըտցուցած սովորութե՛ր կերպով այս կռիւ-
 ներըս ամեննալ Թուրի ձեռք զարնելով կը կըտրը-
 վէր . ուստի՝ Թէ որ այն ատենվան մարդոց կըրնանք
 քաղաքացի ըսելնէ՛ քաղաքացիները իրենց բոլոր
 քաղաքական իրաւունքնին կորսընցընելէն զատ
 կեանքերնին ալ կը կորսընցընէին : Մէկ կողմէն՝ ա-
 մէն յանցանքնին պատիժը ըստակով կըլլար . ուստի

Հարուստ մարդուն վրան ավենևին յանցանք չէր
 մնար . մէկ կողմէն ալ՝ պինտ չարագործ մարդիկ մէկ
 եկեղեցի մը փախած մըտածնուն պէս կազատելին .
 ուստի հինչ մէկ յանցանք մը չէր պատժուիլէր : Մար-
 դուն ինչքը և կեանքը և պատիւը դատողական
 ատեաններէն պաշտպանութի մը չի գըտնելուն հա-
 մար՝ հարկաւորապէս վրէժխնդրութիւնը մասնա-
 ւորաց ձեռքը մնալով սաստիկ կըլար և չէր մարեր :
 Այս վիճակը՝ ինչպէս որ ըսի, ե գարէն մինչև ժա-
 դարը քըչէց : Ասոնց վրայ եվէլցո՛ւր նա և պատե-
 րազմերը՝ որ իրարու ձեռքէ երկիրներ յափշտակե-
 լու համար բարբարոսները առաջին տարիները իրա-
 րու հետ կը կռուէին : Յաղթողներուն հպարտա-
 նալը իրենցմէ յաղթըվողներուն վրայ, Յաղթը-
 վողներուն ըրած յանցանքին պատիժներուն ծան-
 րութիւնը : Քաղաքական պաշտօններու համար՝
 յաղթող ազգին մարդիկը աւելի յարմար սեպելը :
 Առաջկուց եղած քաղաքական կըթութեան ունա-
 կութիւնները՝ բարբարոսութեան սովորութիւննե-
 րու փոխվելը : Բոլոր քաղաքական կառավարութիւնը
 զինուորական կերպի տակ մըտնելը : Վերջապէս՝
 անիշխանութեան և բռնակալութե պտուղը ուրիշ
 բան չէր կըրնար ըլլալ . բայց եթէ խառնակութիւն
 և խեղճութիւն : 888 թուին Մակօնցայի ժողով-
 քին գըտնըվող եպիսկոպոսները կըսեն . « Ամէն
 « դիաց մեզ գողերն ու աւազակները պաշարեր
 « են, որ աղքատները կըսպաննեն, հարուստները
 « կը կողոպտեն, ո՛չ սատուծմէ կը վախնան և ո՛չ

« մարդոցմէ :

¶ • Ասոնք այսպէս իբէն՝ ժա՛ դարուն մէջ սաստիկ պատերազմ՝ մը ելաւ Հռովմայու պապերուն և Նէմցէի կայսերաց մէջ՝ եկեղեցական մեծ իշխանութիւններ տալու իրաւունք ունենալու վրայօք : Յիսուն տարիի մը շափ քըշեց • և բոլոր Իդալիա սպանութիւններով • ամէն խղճմըտանքը վախով • և ամէն տուն ատելութիւնով լեցվեցաւ • ոմանք պապին կողմը կը տաշէին՝ և ոմանք կայսերը • բռնութիւնէ վախնալով՝ Թագաւորականաց դին եղողին բանադրանք կար • բանադրանքէ երկընչելով՝ պապին դին եղողներուն բռնութիւն կար : Խու՛մբ խու՛մբ բարբարոսները Հռովմայու Վապետոլիոն ըսված տեղը մտան • ժողովուրդը ասոնք տեսածին պէս կը փախչէր • գողութենէ ազատելու համար՝ խանութները և գործարանները կը գոցէին • և այլն * :

¶ • Այս Թշնամութիւններուս մէջ ուժ առին կողմնակցութիւնները (Թարաֆ քաշելը) Իդալիայի հասարակապետութիւններուն մէջ • ժա՛ դարէն մինչև ժե՛ դարը : Քաղաքացւոց մէկ մասը քաղաքին մէջէն մէկալ մասը կը հալածէ որ՝ խորհրդարանին մէջ և կառավարութե՛ ատեանը ինքը տիրէ • իր խօսքը քալեցընէ : Աքսորվածներուն ինչքն ալ կառնէին • ընտանեաց իրարու հետ ազգակցութիւնը

Ծա : * Ասիկայ՝ Գրիգոր Է Հռովմայ պապին օրը եղած խռովութիւնն է • որ վերերը մէկ ծանօթութեան մը մէջ յիշեցինք :

յանցանք մը կը սեպվէր, պատիժը միտպէս կը կրէր
 անմեղն ալ՝ յանցաւորն ալ, և ատելու թիւնը ժա-
 ոանգու թք կը քըշէր կերթար: Աքսորվածները
 Իդալիայի մէկ քաղաքէն՝ մէկ ալ քաղաքը օգնու-
 թիւն և ուժ մուրալու կը պըտըտին, որ կարենան
 իրենց քաղաքը դառնալու: Հայրենիքը ազատ ընե-
 լու պատճառանքով՝ օտար իշխաններու և թագա-
 ւորներու կը ծախեն: Տարին երէք չորս անգամ
 հասարակաց և պետութեան գործակալները կը փոխ-
 վին, և ժաղովուրդը ամէն մարդ իր խանութը իր
 բանին գործին հետ ըլլալու տեղը հրապարակները
 կը վազեն, խռովութիւն կը հանեն: Այն հասարա-
 կապետութիւնները միայն ազատ ըլլալին հերիք
 չի սեպելով տիրել ալ կուզեն, և իրարու վրայ տի-
 րելու ալ տեսակ տեսակ պատճառներ կը գըտնեն:
 Քաղաքները որքան հարուստ՝ և իրարու որքան
 մօտ ըլլան՝ այնքան իրարու հետ ատելութիւն և
 քէն կը կապեն: Այս քաղաքներուս բոլոր պատ-
 մութիւնը երկու տեսակ պատերազմի վրայ կը պը-
 տըտի, քաղաքացիները՝ քաղաքին հըրապարակնե-
 րուն մէջ իրարու հետ, և քաղաքին պարիսպէն
 դուրս օտարներու հետ կը ծեծկըզին:

Է. ժք Դարուն մէջ կրօնքի վրայ ալ հակառակու-
 թիւններ ելլելով՝ առաջկուց եղած քաղաքական
 հակառակութիւնները տահա՛ եվէլցուցին. բայց ա-
 սոր համար զատ գլուխով պիտի գրեմք: Այս տե-
 ղըս միայն այսքանը յիշեմ որ՝ ժք դարուն մէջ՝ և
 ժե դարուն սկիզբները մեծ հերձուած մը ելաւ որ՝

բուրբ Եւրոպայի մէջ կատաղի խռովութիւններ հանեց, և 50 տարիի չափ քըշեց: Պատուութեան հետամուտ եղողները իրար կը բանադրէին, պետութիւնները զօրք կը ժողվէին, զէնք կառնէին, մէկ մը մէկ կողմը կը սրաշտպանէին՝ մէկ մը մէկալ կողմը: Քրիստոնեաները անհաշտ կատաղութեամբ իրար կսպաննէին, օր է օր եկեղեցականներուն վարքին ավրվելը կը շատնար, ամբշնալ ըսած բանը բուրբովին վերնալու վրայ էր, երկիրաճններուն խղճմըտանքը անհաստատ, անստոյգ, որ սլապին հնազանդելիքնին չը գիտէին: Այսքան գայթակղութեան բաները տեսնելով՝ շատ մարդ ալ հաւատքը կը ձըգէր: Հասարակաց սիրտը ասանկ քաղաքական և կրօնական խռովութիւններէն երեւով՝ արիւն կը զակ մէկ կատաղութիւն մը ըսկըսաւ այն օրերը երևիլ թէ մասնաւորաց վէճերու և թէ հասարակաց կռիւներու մէջ: Այսքանըս հերիք է յիշել որ՝ ժԴ և ժԵ դարերուն մէջ այս կատաղութիւններըս կնիկ մարդոց ալ անցաւ, և շատ կընիկ մարդիկ զինուոր եղան, զէնք առին, և բերդեր պաշարելու ալ գըտնըվեցան:

Մ. Ե. Դարէն մինչև ժԵ դարուն վերջը՝ բերդի տէր պարոններուն կամ սլրզաիկ իշխաններուն բըւնութեան տակը կը ճըզմըվէին արտերը, և մանաւանդ մանր քաղաքները և գեղերը, քանզի այս իշխաններըս իշխանական կարողութեան մէկ մասը իրենք ձեռք առնելով՝ իրենց բերդերուն մէջ կը կենային մարտկոցի (Թապէսյի) մէջ կեցածի սէս:

Արտերը բանող մարդիկ ամենն ալ ասոնց գերի կը սեպղէին , և ասոնք ալ եզներէն և կովերէն շատ տարբերութիւն մը չէին տեսներ վրանին , արտերու և անասուններու պէս այս մարդիկս ալ իրենց տիրոջը ծախու ինչքերուն կարգն էին : Անոնցմէ ծընած աղաքն ալ գերի էին , իրենց տիրոջմէն հրաման չառած չէին կըրնար կարգը վիւ , մէկ ծառայ մը քանի մը աղայ ունենար նէ՝ վիճակ կը ձըգէին թէ՛ տըղոցը ո՞րը իրեն հօրը կ'ընայ , ո՞րը տիրոջը : Գեղացիներուն գերի ըլլալու վիճակը ժողորուն մէջ վերջացաւ Իդալիա , բայց ասով ալ աղէկ վիճակի մը հասան , ուրիշ երկիրներ՝ ատեն մը նալ այս վիճակըս քըչեց : Ժող Դարուն մէջ Նէմցէստան եղած գեղացիներուն ոտք ելլալը՝ որ պատմութիւններու մէջ և բնակի անցքերուն մէկն է , գլխաւոր պատճառ ունէր որ՝ ծառայական և անձնական գերութիւնը վերցունեն , ոտք ելլողները յայտնի խօսքով ասիկայ կուղէին : Գետնի տէր եղող պարոնները՝ իրենց երկրին գեղացիներուն կենացը և մահուանը վրայ իշխանութիւն ունէին , և թագաւորը՝ անոնց բռնած բանին պատճառը չէր կըրնար հարցընել : Պարսպ կենալուն և ուտել խմելուն հետևութիւնը և պտուղն է բարուց ասպականութիւն , և ինչ մոլութիւններու որ Տիբերիոս կայսրը ինքը զինք տըված էր Քաբրէա կղզին իբէն՝ գետնի տէր պարոնները այն մոլութիւնները ամենն ալ ունէին : Խօսքերնուն չէկող կընիկները բռնութեամբ իրենց քով կը բերէին , և հիւս մէկ օրէնք մը չկար որ զա-

նոնք յափշտակողներուն ձեռքէն աղատեր : Ձի-
 նախաղուծեան ասպարէզները և մեծամեծաց պա-
 ւատները երևելու խենթութիւնը՝ գեանի տէր ե-
 ղող պարոններուն պատճառ եղաւ որ՝ ամէն մէկը
 իր լաթերովը և ձիերովը ուրիշներէն հարուստ ե-
 րևի . և համեստութեամբ արուեստ բանելով իրեն
 ըստակը և եկամուտը չէր կըրնար եվէլցընեւ . որով-
 հետև արուեստ կամ չէր գիտէր , կամ բանիլը նա-
 խատինք կը սեպէր . ուստի գողութեամբ ըստակնին
 եվէլցընեւ կը նայէին : Մօտ եղողներուն երկիրը
 կը կոխէին և թալան կընէին . ճամբէն անցնողները
 կը մերկացընէին . և ասիկայ ընելով չէին աւստալիժէ
 վախնար . որովհետև գերագոյն իշխանութիւնը ասոնք
 զսպելու ուժ չունէր : Պէթթինէլի կը պատմէ որ՝
 Պռանտա Քասթիլեօն եպիսկոպոսը՝ Հռոմայէն
 Բիաչէնցա դառնալն իքէն՝ սուրբ Դունինոս գեղը
 հասածին պէս Ուլանտոս Բալլալիչինօն ասիկայ
 բռնեց և բանտը դրաւ . ուրիշ պատճառ մը չու-
 նէր , բայց եթէ բոլոր ունեցածը ձեռքէն առնել ,
 և երէք ամիս բանտը դընելէն ետքը շատ մը նաւ
 ըստակ առնել անանկ թողտալ որ երթայ : Ուրիշ
 գող պարոններ ալ Ալպայի եպիսկոպոսին և ուրիշ
 եպիսկոպոսներուն և իշխանաց ըրին : Մէկ գեղե-
 ցիկ արտ մը՝ դժնդակ բռնաւորի մը զրկանքներէ
 աղատելու համար հարկ էր անիկայ եկեղեցիի մը
 շնորհէլ , կամ շնորհված է տէյի անուն հանել ,
 կամ մէկ սուրբի մը պաշտպանութեան տակ ձգել .
 բայց այն սուրբն ալ՝ այն բռնաւորներուն սեպած

սուրբերէն ըլլալու էր • որովհետև ամէն սրբոց յարգը մէկ չէր ասոնց առջին : Գեանի տէր եղող պարոններուն ամէն ազատութիւնէն աւելի յօժարութիւններնուն համեմատ եղածը և սիրածը այն էր որ՝ իրենց իրաւունքը իրենց թուրովը տեսնէին : Անոր համար կոպիտ և ամբարտաւան և կատաղի մարդոց մէջ պատերազմը պակաս չէր և երկու թըշնամիներու հողէն դուրսալ կելէր • որովհետև երկու կողմէն ալ ամէն ազգականները մինչև չորս ճիւղ՝ ասանկ կռիւներու մէջ կը մըտնէին : Եւ թշնամութիւնը անցնելէն ետքն ալ • մէկ անհանգըստութիւն մը մէկ սիրտկոտրութիւն մը կը տիրէր • որ միշտ արուեստները և վաճառականութիւնը կը կասկեր • քանզի ամէն օր կը ընար յանկարծակի մէկ կողմէն պատերազմ մը ելլել : Տկարութիւնը որքան շատ ըլլայ նէ՛ անգթութիւնն ալ այնքան ելլել կը ըլլայ • ուստի այն մանր իշխանները անգութ պիտի ըլլային հարկաւորապէս : Բանաստեղծ մը կըսէ •

« Պատժէ փախած մանր իշխանները՝ իրենց պաւատը զօրքով լեցուցին • և ո՛վ որ անոնց գլուխ և

« կըռնակ չէր ծըռէր նէ՛ սպաննել կուտաին » : Գեանի տէր եղող Ինկիլիզ պարոններուն՝ ժա՛ դարուն վիճակին համար Սաքսոնեան ժամանակագրութիւնը ասանկ կը գրէ •

« Բերդ շինել տալու համար աղաւթաւ ժողովուրդը շատ կը տանջէին • և բերդերը « շինելէն ետքը՝ անօրէն և կռուասէր մարդով կը « լեցընէին » որ աւելի սատանայ էին • քան թէ « մարդ • ասոնք ինչ երկի մարդու կամ կընկան վրայ

« ըստակ կամ ըռղակ մը կայ տէյի կարծիք կընէին
 « նէ՛ կը բռնէին, բանալ կը դնէին, կը տանջէին,
 « անանկ ծանր չարչարանքներ կուտային որ՝ կարե-
 « լի է թէ առաջին նահատակները սիլէ քաշած
 « չէին: Ասոնց պաղինները՝ ցեխի (չամուռի) մէջ
 « կը խեղդէին • պաղինները՝ գլխէն, և պաղինները՝
 « մէկ ոտքէն կամ ձեռքին մեծ մատէն կը կախէին,
 « տակէն կրակ կը վառէին: Պաղիններուն գլուխը
 « կայ կայ ըրած բարակ լարով կը սըխմէին, որ
 « կայերը մինչև ուղեղը կը հասնէին • ուրիշները
 « գորտով և ուրիշ սոսկալի ճճիներով և օձերով
 « լեցուն ջուրի մէջ կը խօթէին” : Թէ որ ասոնց
 ըրածները մէկիկ մէկիկ պատմելու ըլլանք նէ՛ կար-
 դացողին երևակայութիւնը տանջէն ալ մեղի ան-
 գթութիւն կը սեպենք • Իտալացի պարոններուն սո-
 վորութիւնները ասոնցմէ շատ տարբեր չէին: Եւ
 Պէթթինէլի ասոնց համար և Իդալիայի մանր իշ-
 խաններուն համար կըսէ որ՝ « Ստոյգ է որ՝ պա-
 « տերազմող քաղաքներուն մէջ հասարակաց եղած
 « փնտաներէն զատ՝ քաղաքներուն վրայ բռնակա-
 « լութիւն ընող զօրապետներուն մէջ մէկ գաղանա-
 « կան անգթութիւն մը տիրած էր և կատաղութի
 « մը կար, որ յափշտակելով և բռնութիւն ընելով
 « չէին կըշտանար • երբեմն գողերու հետ կը միա-
 « անային, արունի ծարաւ էին, և բարբարոսական
 « սպանութիւններ և ջարդ ընելու համար հոգի կը
 « նետէին: Դաւաճանութիւն երկաթով կամ դեղե-
 « րով իրար ըստանները բան մը ըսել չէր • գերի

« բռնածնինն ողջ պահելով՝ աւելի անգթութի կը
 « նէին. գաղանի պէս երկաթ գառագեղի (խաֆէ-
 « սի) մէջ կը գոցէին. յատկապէս մարդ տանջելու
 « համար շինված հորերու և փրոներու մէջ ողջ
 « ողջ կը պահէին. ասանկ շինուածքներուն մնաց-
 « ուածքը տեսայ Մօնձա, որ Վիդքօնթի կոմսերն
 « ալ՝ անոնց թշնամիներն ալ փոխանակաւ անօթի
 « մեռան կատաղութիւնով, և ողջ իբէն տեղին խո-
 « նաւութենէն և սոսկալի մթութենէն որդնտե-
 « լով: Քօմօ քաղաքը Պառատելլօ ըսված բերդը
 « կը յիշվի, և Ճօվիօ պատմիչը Վիսքօնթի ցեղին
 « պատմութեանը մէջ շատ կը խօսի ասոր համար,
 « որ Միլանու Թօռոխանի իշխանները շինած
 « էին, սիւներով և երկաթներով իրենց թշնամի-
 « ներուն գառագեղ պատրաստելու համար. թշնա-
 « միները հօն կը ձըգէին, որ տարիներով կը կե-
 « նային և ողջ իբէն փրտաիլ կըսկըսէին, եղունգ-
 « նին և մօրուքնին կերկըննար, գլուխին մազերուն
 « մէջ հազար կերպ անմաքուր բաներ կը գոյանայ-
 « ին, և միայն սրաի նեղութենէն և մըտմտալով կը
 « մեռնէին այն տեղ: Մանթուա քաղաքը աշտա-
 « րակմը կայ որ աշտարակ գառագեղի (քաֆէս
 « քուլէսի, Թօռոէ տելլա կապուիա) կըսվի. քանզի
 « այս աշտարակին բարձր մէկ տեղէն գառագեղմը
 « դուրս տընկըված է երկաթէ շինված, որ անցնող
 « դարձող կը տեսնեն, և անցած ատենները այս
 « տեղվանք անանկ խեղճ բաներ տեսնըված են որ
 « տեսնողին սիրտը կը շարժէր. բայց ասանկ բաներ

և ուրիշ տեղեր ալ պակաս չէին: Միլանու գառա-
 ւ գէղները շինեւ տըվող Թօռուխանիները՝ իրենք
 և ալ իրենց Թշնամիներէն յաղթըվեցան, և այս տե-
 ւ ղերուս տանջանքը իրենք ալ քաշեցին: Սոյոք է
 և որ՝ պատմութիւնները այնքան անգութ և գազան
 և մարդիկ կը յիշեն նէ՝ անոնց մէջ ամէնէն սոսկալի
 և կը ցըցընեն Քռէմօնայի իշխանը՝ Կապուինօ
 և Փօնտօլօ անուն . և Բավիայի և Ալէսսանտօնայի
 և իշխանը՝ Փաչինօ Քանէ անուն . Բատուայի իշ-
 և խանը՝ Էզզէլին Տառօմանօ անուն . և Ճիօլաննի
 և Մարիա Վիսքօնթին , որ շըներուն ողջ մարդ
 և փաշատեւ սորվեցուցեր էր , իրեն զուարճութեւր
 և համար աչքին առաջը ընեւ կուտար . և ուրիշ
 և ասանկ սոսկալի ցուցանքներ: Սակայն գթած և
 և սիրափուխ մարդիկ քիշէին . և կը յիշվին Լօտիի
 և իշխանը , Քռէմօյի իշխանը , Քօմօյի իշխանը ,
 և և ուրիշ քաղաքներու իշխաններ ալ: Իրարու հետ
 և ասանկ որ կը վարվէին նէ՝ ամէն մարդ կըրնայ
 և հասկընալ որ՝ իրենց խեղճ հպատակներուն և
 և քաղաքացիներուն ինչ կընէին . իրենց հայրենիքը
 և ինչպէս կը կառավարէին” : Թէպէտ իշխանական
 հեղինակութե օրէ օր եվելնալը՝ գեանի տէր պա-
 րտններուն դրած ծանր անկարեաններուն օր աւուր
 վրայ ուժով արգելքներ կուտային , բայց ժէ դա-
 րուն մէջն ալ ասանկ իշխաններու բռնութիւններ
 կը տեսնըվէին Թէ քաղաքներու և Թէ բերդերու
 և գեղերու մէջ: Եւ ասոր հաստատութիւն Լօմ-
 պարտացւոց աղերսագիրները՝ բռնաւորական գոր-

Տոց դէմ, որոց մէկ հասը հոս դնելք, « Փորձը կը
 « ցըցընէ որ՝ այս պետութեանս թէ՛ քաղաքներուն
 « և թէ՛ գեղերուն մէջ շատերը բռնութիւնք
 « կառնեն ժողովուրդէն, բռնութեամբ բան ծախու
 « առնելու կամ վարձելու (քիւրալամիշ ընելու)
 « կամ փոխելու, և ուրիշ նման բաներու համար
 « սրայմանագիրներ շինել տալով և ուրիշ հազար
 « կերպ ճամբաներ բըռնելով՝ աղքատները կը ճըզ-
 « մեն, երբեմն ասանկ բաները բոլորովին կարգի-
 « շեն ալ, Հարսնիքներ ըլլալու կամ չըլլալու կը
 « խառնըվին, զրկանք քաշողներուն կամքը ըլլալը
 « կամ չըլլալը՝ ասոնց ձեռքն է, գանգատ ըլլալը
 « չըլլալը՝ ասոնք պիտի տնօրինեն, դատերը իրենց
 « ուղածին պէս դարձընեն, վկայներ մըտիկ ըլլըվին
 « կամ չըլլըվին, մէկը իր կեցած տեղէն ելլէ՝ ուրիշ
 « տեղ երթայ, մէկ սրայման մը ընելու իշխանութիւն
 « չունենայ կամ այն սրայմանէն ետ կենայ, մէկը ել-
 « լէ իր ջաղացքը երթայ, այս քահանայն իր կար-
 « գին ինկած հոգևոր սաշտօնը չի կատարէ, կամ
 « իրեն սաշտօնէն դուրս և իրեն չինկած բանի
 « ձեռք զարնէ, առանց իշխանութիւն ունենալու
 « իրենց չինկած որսորդութիւնը ընեն, և որսի
 « գացողներուն սպառնան, կամ փնաս հասցընեն,
 « Հասարակութիւնը իրեն գործակալները և սաշ-
 « տօնատարները ընտրէ կամ չընտրէ, ընտրածներն
 « ալ այս ինչ մարդիկը ըլլան, տուրք ժողովուրդները՝
 « սաշտօնատէրներէն տուրք չի կըրնան առնել,
 « սաշտօնատարները բաւական ազատութիւն չու-

« Դեհան՝ արդարութեամբ դատաստան տեսնելու
 « կամ իրենց պաշտօնին գործը կատարելու . իրենց
 « կամքը չի կատարողները կը դատապարտեն , անոնց՝
 « կամ անոնց մարդոցը կամ տըներուն մէսա կը
 « հասցընեն . վայելուչ և օրինաւոր բաներ ըլլալը՝
 « կամ հեղինակութեամբ՝ կամ բռնութիւն մը ընե-
 « լու վախ տալով կը խափանեն . ինչպէս ըսենք ,
 « յանցաւորներուն պաշտօնէ իյնալը՝ կամ պաշտօ-
 « նի վրայ մնալը , թէ՛ իրօք ըլլայ յանցանքնին և թէ՛
 « կարծեօք : Արժափանեն որ արդարութեան և
 « դատաստանի թողութիւն բողոքում չըլլայ՝ թէ՛ իրենց
 « համար , և թէ՛ իրենց ընտանեացը և իրենց մար-
 « դոցը համար . արդարութեան ճամբով ուրիշ բա-
 « ներալ թող չեն տար որ ըլլայ : Ասանկ բռնու-
 « թիւններըս ընողներն են գետնի տէր պարոննե-
 « րը , ազնուականները , միջին աստիճանի մարդիկ ,
 « ստորին մարդիկ , և հասարակութենէն ո՛վ որ
 « կըրնայ նէ :

Է . Իններորդ դարէն մինչև ժող դարը՝ ուրիշի
 վրայ յարձակիլը և սպաննելը կամ մէսա հասցընելը՝
 անանկ մէկ քաղցկեղ մը եղաւ որ՝ բոլոր Եւրոպա
 տարածեցաւ : Իշխաններուն կարողութիւնը քիչ-
 նալը , գետնի տէր պարոններուն ուժը եվէլնալը ,
 և անոնց իրարու հետ պատերազմելն՝ մէկ կողմէն
 հասարակաց վրայ տեսչութիւն և խնամք ընելը վեր-
 ցուցին . մէկ կողմէն հասարակաց վրայ վազողները
 և անոնց ինչքը և կեանքը վտանգի ձգողները շատ-
 ցան , որ էին պատերազմերը լամբնակն ետքը բան

դործ չունեցող զինուորները : Քեռիւն վանքին
 վանահայրը՝ Լուբոս անուն՝ իններորդ դարուն մէջ
 պատմած բաներովը մեզի կը հասկըցընէ որ՝ արա-
 հեռ (ճատտէ) ճամբաները այն ատենները այնքան
 ավրոված էին որ՝ ճամբորդներուն տեղ մը երթալու
 ատեննին հարկ կըլլար կարաւան կապել որ ճամբու
 գողերուն ձեռքէն ապահով անցնին երթան : Յան-
 ցանքներուն շատութիւնը հասարակաց կարծիքն ալ
 ավրած էր , որ յանցանք ընելուն հետևութիւնը
 պատժելին է տէյի բըռնած էին . ուստի ստորին
 դատաւորները՝ որ հարիւրապետ կըսվէին , կը հար-
 կաւորէին երբում ընել որ՝ ոչ իրենք գողութիւն
 ընեն , և ոչ գողութիւն ընողներուն կամ սպանող-
 ներուն պաշտպան կենան : Այս յանցանքներըս
 այնքան շատցան , և յանցանք ընողները այնքան
 յանդգնութիւն ստացան որ՝ քաղաքական իշխա-
 նութեանը մօտ անոնք պատժելու ուժ չի մնաց .
 ուստի եկեղեցական իշխանութենէն օգնութիւն
 ուղեցին . մեծ հանդէսներով ժողովքներ եղան .
 սրբոց մարմիններ մէջ բերվեցան . գողերուն և հա-
 սարակաց հանգըստութիւնը խռովողներուն դէմ
 բանադրանքներ կարդացվեցան : Ժն Գարուն մէջ
 Ինկիլթէռուայի անտառները գազանացեալ աւա-
 զակներով և մարդասպաններով այնքան լեցված էին
 որ՝ մօտ տեղի դաշտերուն մէջ գըրանրված գեղա-
 ցիները գողերէն ազատելու համար աղօթք մը հնա-
 րած էին , և ամէն իրիկուն լուսամուտները գոցեւէն
 ետքը՝ այն աղօթքը կը կարդային : Պարոնները աւա-

զականերուն ընկերութեան պաշտպան կը կենային, և իրենց բերդերուն մէջ առնելով՝ արդարութեան ձեռքէն կազատէին, այս դաշինքով որ՝ ճամբորդներէն կողոպտած բաներէն իրենց ալ բաժին ելէ: Ինկիլթեռայի քէ Հենրիկոս Թագաւորին օրերը, որ ժք դարուն մէջ կը Թագաւորէր՝ և տկար մարդ մը նէր, բոլոր բերդերը և ամրոցները՝ որ ազնուականաց գլխաւորներուն ձեռքն էին, աւազակաց բոյն դարձեր էին: Համբշիր կոմսութեան մէջ ասանկ տեղեր այնքան շատ կային որ՝ դատաւորները չէին կրնար հոն գլտնըվոյնները յանցաւոր և փնասապարտ են տէյի վկայելու մարդ գլտնել: Թագաւորը պիլէ անգամ մը գանկոտեցաւ որ՝ այն սոսկալի գաւառէն անցնելն լքէն՝ զինքնալ նախատեր և մերկացուցեր են: Ետքը հասկըցվեցաւ որ՝ Թագաւորի պալատին ազնուականներուն շատը՝ այն աւազակներուն ընկերութենէն են եղեր: Եւ Թէպէտ ան Օդուարդ Թագաւորը աւելի հաստատութեամբ Թագաւորութիւնը կառավարելու ձեռք զարկաւ, բայց ասոր օրն ալ աւազակներու խումբ մը 1285 Թուին տօնավաճառի (բանայիրի) ատեն Պոսթըն քաղաքը կոխեց և շատ ինչք վերցուց անկէց: Մեծերնին էր Ռօպէռդ Քըմպըռընտ անուն, հարուստ և զօրաւոր ազնուական մը, ասիկայ բռնեցին, դատեցին և մեռցուցին: Բայց իրեն գործակիցներուն հիշ մեկուն անունը չի կրցան բերնէն առնել: Ասոնք ասանկ արունկըզակութեան հետ անամօթութիւն ալ ունէին: Ասոնց գլխաւորներուն

մէկը իր հագած լաթին վրայ արծաթ գրով սա՛ խօս-
քըս բանեւորվեր էր, "ես եմ՝ Վառներ զօրապետ,
խու՛մբ մը գողերու գլխաւոր հրամանատար, աստու-
ծոյ թշնամի • ո՛չ ողորմութիւն ունիմ՝ և ո՛չ մարդ
մեղքընալ գիտեմ" : Հարկ է ըսել որ՝ մեր ժամա-
նակի աւազակները ասոր չափ անամօթ և անկրօն
և անհաւատ չեն : Մէկ աւազակներու խումբ մը՝ ո-
րոց զօրապետ էր Էթճիլպէտթ Միտէթն և Կօթիէ
Սէլպէյ , 1316 թուին Գուրլինկթըն տեղին մօ-
տերը երկու կարդինալի վրայ յարձակեցան , որոց
առջևէն ինկած կերթոյ Տուրհամի եպիսկոպոսը, և
անոր եղբայր Լօստ Պօմօնդը, և շատ ազնուական-
ներ և ծառայներ , ամենն ալ աղէկ զինեալ : Աւա-
զակները երկու կարդինալներուն քովը գըտնըված
բոլոր ստակը առնելէն ետքը՝ թող տըվին որ ճամ-
բանին երթան, բայց եպիսկոպոսըն ու անոր եղբայ-
րը բռնեցին հետերնին տարին • մէկը Մօսբէթ
բերդը գոցեցին, և մէկալը՝ Միդֆլուտ բերդը, մին-
չև որ շատ մը ստակ տալով ազատեցան : Գիւրաւ-
կը հասկըցվի որ ասանկ աւազակներ, որ թագաւոր-
ներու և կարդինալներու և առաջնորդներու և կոմ-
սերու վրայ կը վաղէին , որ առանց բազմութեան
ճամբոյ չէն երթար, բազմամարդ քաղաքներ կոխե-
լու ալ կը համարձակէին , հարկաւորապէս սովորա-
կան կերպով ճամբա ընողներուն և գեղերու բնա-
կիչներուն ո՛րքան վնասներ կընէին , և ասիկայ այն
ժամանակի պատմութիւններն ալ կը հաստատեն :
Գողութիւնը անանկ ազնիւ մէկ բան մը երևցաւ

որ՝ ժող դարուն սկիզբները Ինկիլիզի ընդհանրիկոս
 Թագաւորին օրը միայն Ինկիլթէոպլի մէջ 22000
 դող մեռցուցին կըսեն պատմիչները : Պէթթինէլի
 կըսէ որ՝ « Ուրիշ տեսակ մը մարդասպաններ և գո-
 « ղեր ելան 1350 Թուականէն ետքը , որ զինուոր
 « ներու ընկերութիւն կըսվէին , և էին մանր խումբ
 « զինուորներ և մարդասպաններ , որ ոչ օրէնք կը
 « ճանչնային և ոչ կըթուծուէին , ամէն տեսակ գէշու-
 « թիւն ընելովն՝ անուննին ալ շատ ավրոված էր :
 « Ասոնք զօրապետներ և գնդապետներ ունէին , և
 « բնաւ վարձք մը և հատուցում մը չունէին • միայն
 « աղատութիւն մը տրուած էր իրենց ամէն տեղ
 « կոխելու և աւար (եաղմա) ընելու • և ո՞ր երկիր
 « որ ասոնց աւարառութենէն աղատել կուզէր նէ՝
 « անոր վրայ ծանր տուրք կը դնէին և կ'առնէին :
 « Այս կերպ զինուորութեանս մէջ միացած էին
 « Իտալացիք , Քուանսըղներ , Նէմցէներ , Մաճառ-
 « ներ , և ուրիշ օտարազգի մարդիկ , որ պատերազ-
 « մող զինուորներէ զատված՝ և լեռներուն անդի
 « կողմէն եկող զօրքերէն Իգալիա մնացած էին :
 « Այս բարբարոսները շատ տարի բոլոր Իգալիա
 « պըտրտեցան • ամէն կողմը զարկին , այրեցին և
 « բնակիչները առանց մեղքընալու ոտքի տակ ա-
 « ռին ճըղմեցին : Այս զինուորներս շատ անգամ
 « իրենց տէրը փոխեցին , և որովհետև 1400 Թուա-
 « կանէն առաջ բոլոր Իգալիայի մէջ զինուոր միայն
 « ասոնք էին • ուստի շատ մեծամեծ մարդիկ ալ ա-
 « սոնց կարօտ էին • և Իտալացի հիշ մէկ լիշխան մը

և և հիշ մէկ Իտալիայի քաղաք մը չէր համարձակեր
 և ասոնց վրայ ելլելու • բայց եթէ երբ որ յուսահա-
 ւտեւում իրենց անձը պաշտպանել հարկ կըլլար •
 և և ասոնց մէջը երկպառակուծիւնը անպակաս ըլ-
 ւալում թէպէտ ասոնցմէ շատ մարդ կը զատվեր •
 և բայց հիշ մէկ անգամ մը անոնք ալ մէկ տեղ ժող-
 ւ վըված խումբ մը եղած չէին ուրիշներուն դէմ
 և դընելու : Այս սպաննողներնուս խումբը այն ա-
 ւտենէն ետքը պինդ շատը 15000 հոգիէն եվել
 և չեղաւ • և շատն ալ գող , չարագործ , սինլքոր
 և (չափոյն) մարդիկ • հետերնին շատ մը նալ գար-
 ւ շելի կընիկ մարդիկ և տըղայք • ասոնք ալ համ-
 ւ րանք կը լեցընէին :

Ը • Այսքան մեծ գեշուծիւններուն վրան եվել-
 ցնւր ուրիշ սոսկալի գեշուծիւն մը նալ ժանտախ-
 տը , որ անցած ատենները շատ կը պատահէր Եւրո-
 պա , և ամբողջ երկիրներ մարդու կարօտ կընէր :
 Դարի վրայ հաշուելով Հռոմայեցոց հասարակա-
 պետութեան ստենը մէկ ժանտախտէն մինչև մէկալ
 ժանտախտ՝ միջոցը՝ իրարու վրայ սեպելով՝ կուգայ
 21 տարի : Օգոստոս կայսեր ժամանակէն մինչև
 1680 թուականը՝ իննսուն և եօթն ժանտախտ կը
 համբէն պատմիչները • ամէն մէկին միջոցը կըլայ 17
 տարի : Պինտ գէշ ժամանակ կը գըտնեմք Եւրո-
 պայի պատմութեանց մէջ՝ 1060 թիւէն մինչև
 1480 • այսքան ժամանակի մէջ երեսուն և երկու
 ժանտախտ կը պատմըվին • ամէնն ալ սաստիկ՝ և քա-
 ղաքներ փըլցընող : Միջոցնին կիցիայ 12 տարի :

Միայն ժգ դարուն մէջ, որ հիւանդութիւնները և
ամէն գեշութիւն վերջին աստիճանը հասան, Եւ-
րոպա գրեթէ փլաւ տասն և չորս անգամ ժանտախ-
տով ամէնն ալ սոսկալի և գրեթէ ընդհանուր էին ։
Միջոցնին կըլլայ 7 տարի ։ Փիլիսոփայութե ջանքն
ու իշխաններուն հոգնելը մէկ տեղ գալով՝ վերջա-
պէս կըրցան Եւրոպայի շատ տեղէն ժանտախտը
հեռացընել և արևելք խըրկել, որ այն տեղի բնա-
կիչներուն տգիտութեամբն ու աւելորդապաշտու-
թեամբը մինչև հիմա կը քըշէ * ։

Թ . Բորոտութիւնը ։ Գուցէ իտալացիները էն
առաջ բարբարոս ազգերէն պըլըշկեցան եօթներ-
րորդ դարուն մէջ, անկէց ետքը հեռեեալ դարերուն
մէջ քանի գնաց նէ տարածեցաւ ։ Սբռէնկէլ կըսէ
որ՝ խաչակիր ըսլած զօրքը արևելեան երկիրներուն
բորոտութիւնն ու արևմտեանը իրար խառնելով՝
այն ժամանակին յատուկ նոր տեսակ բորոտու-
թիւն մը հնարեցին ։ Եւ այս հիւանդութիւն այնքան
շատցաւ և տարածեցաւ որ՝ ժգ դարուն մէջ բո-
րոտներու համար միայն Քռանսա 2000 հատ հի-
ւանդանոց կար ։ և բոլոր Եւրոպա 19000 հատ ։
Եւ խաչակիրներէն ետքը՝ նոյն Սբռէնկէլ կըսէ որ

Ծա ։ * Հեղինակը 1829 ին. մեռած է ։ Օսմանեան
տերութեան մէջ ալ ժանտախտէ զգուշութիւնը
օրէնքը ըլլալը, և այս օրէնքըս բըռնըված տեղերը
այն ատենէն մինչև հիմա ժանտախտ չի պատա-
հիլը չգիտէր ։

« Անմաքուր հիւանդութիւններուն տեսակները ա-
 «ւելի շատցան : Մասնաւորապէս ծննդական ան-
 « դաւքներուն վրայ և ամօթ տեղերը եղած վերքե-
 «րուն համար կը զրուցեմ կըսէ . և ասոր պատճառը
 «ինչ ըլլալը ամէն մարդ գիտեն : Արհասկըցիլի որ՝
 «այն միջոցին այս հիւանդութիւններուն պատ-
 « ճառներն ալ շատ էին” : ԺԿ Դարուն մէջ Նէմ-
 ցէստան բորոտներուն շատնալուն վրայ :

Ժ . Իրօք եղած գէշութիւններուն հետ կարծի-
 քական գէշութիւններ ալ կային, որ իրօք եղածնե-
 րէն աւելի ուժով էին՝ և աւելի յաճախ կը պատա-
 հէին : Մարդս՝ որ տկար ըլլալուն համար վախկոտ
 ալ է՝ չճանչցած բաներէն, և իր ուժը չօգտեր՝ կար-
 ծածներէն ամէնէն ալ կը վախնայ : Անանկ է նէ՝ մեկ
 մարդ մը որքան տգէտ ըլլայ նէ՝ այնքան վախկոտ
 կըլլայ, ինչպէս որ մեկին ծունկերը որքան տկար ըլ-
 լան նէ՝ իյնալը այնքան շատ կըլլայ : Փիլիսոփայու-
 թեան յառաջադէմ ըլլալը՝ մեզ հազար կերպ խըրտ-
 ուիլակներէն ազատեց , որ մեր նախնեաց սիրտը
 անոնց համար միշտ աս ու դողի մէջ էր : Բնական
 գիտութեանց (Փիզիքայի) բնաւ տեղեկութիւն չու-
 նենալով՝ սովորական բան մը նալ տեսնէյին նէ՝ սա-
 տայնան է ընողը ըսելով կը դողային : Տան կարա-
 սիքները (էշեաները) օդոյն խոնաւութենէն օդ չի
 դալէլու չոր տեղ մը անցնելով՝ երբեմն գիշերը մեկ
 չըթըռտոց մը կը հանեն . հիները այս ձայնըս լըսե-
 լով՝ իրենց նախնիքներուն մեկին հոգին տուն եկած
 կը կարծէին և կը դողային : Մէկ տղայ մը կամ եղ

մը կամ ոչխար մը հիււրնդնար նէ՝ չար աչքի եկաւ
կը կարծէին և կը դողային : Այն ատենուան աստ-
ղաբաշխութիւնը անանկ կը սորվեցընէր որ՝ պոչով
աստղերուն պոչը կամ մազը ո՞ր դին դարձած ըլլայ
նէ՝ այն կողմը մեռնել և ժանտախտ կը ցըցընէ •
այս ալ իրաւ կը կարծէին և կը դողային : Տգէտ
ձառասող մը կելէր՝ աշխարհիս վերջը մօտ է կը-
սէր • շուտ մը ասոր ալ մեր նախնիքը կը հաւատային
և կը դողային : Այս վերջին ըսածըս որովհետև
Եւրոպա շատ զուրցըվեցաւ՝ քանի մի օրինակ տանք
ասոր : Մէկը Բիաչէնցա քաղաքին մէջ քարոզելով
որ երէք տարի առաջ՝ Բաբելոն քաղաքին մէջ նեռը
ծընէր է , քիչ մնաց որ Բիաչէնցա տակն ու վրայ
կըլար կոր : Մինչև երկու հարիւր միլ տեղ ձայն
հանեց որ "հիմա աշխարհիս վերջն է" • և ասոր հա-
մար Ասիայէն գիր եկած կըսէր Վէնէտիկ , Մի-
լան , և Ճէնովա : Քաղաքին եպիսկոպոսին՝ ժողո-
վուրդը հանդարտեցընելու համար հարկ եղաւ ասոր
հակառակը քարոզել , և ասիկայ սուտ հանել : 1456
Թուին նոյն քաղաքին մէջ ուրիշ մարդ մը երևցաւ
ապաշխարողի երևոյթքով , երկար մօրուք և ոտքերը
բոպիկ • քարոզեց որ քրիստոսի երկրորդ գալուստը
շատ ուշանայալ նէ՝ մինչև 1460 Թիւը կուշանայ •
և վկայութիւն կը բերէր աստուածաշունչէն՝ յայտ-
նութեան գիրքէն , և սուրբ Վինչէնցօ Քերրէրիին
խօսքերէն • և այս սուրբիս խօսքը աւելի կազդէր ,
որովհետև շատ ատեն անցած չէր որ սրբոց կարգը
մտեր էր , և այն տարի այն քաղաքին մէջ առաջին

Հանդիսաւոր տօնախմբութիւն կը ըլլար : Այս մարդս
 էփ ալէկի ստէն քարոզէց . և իր խօսքը հաստատե-
 լու համար նշան կուտար որ՝ մօտ օրերը մէկ սուտ
 պապ մը պիտի նըստի . և նեռը պիտի գայ . և այլն :
 Նոյն Բիւշէնցա քաղաքին մէջ 1454 թուին ու-
 բիշ քարոզիչ մը ելաւ Յովհաննէս Հոգոս անուն .
 այս ալ աշխարհիս վերջը մօտ կը ցըցընէր , և 1501
 թուականը ժամանակ կտրէց : Հասարակաց կարծիք
 էր որ՝ աշխարհիս վերջը մէկ դարու մը վերջացած
 ստէնը պիտի գայ . ամէն դարագլուխ՝ աստուածային
 համբերութեան մէկ սահման մը բռնած էին . հասա-
 րակութեան խղճմտանքը ծանրացած ինչ անօրէ-
 նութիւններ կար նէ՝ անոնց ամէնուն ալ վերջը այն
 ստէնը կուգար : Ինծի անանկ կուգայ որ՝ հիմայ
 ատանկ վախեր չըլլալուն՝ գլխաւոր պատճառներուն
 մէկը կըրնայ ըլլալ հասարակութե՛ վարքը և բարքը
 առաջիւս չափ գէշ չըլլալը : Մեր հայրերը դիւրաւ
 կը հաւատային որ աստուած առ հասարակ ժողո-
 վուրդին մէկ մեծ պատիժ մը տալով՝ վրէժը պիտի
 առնէ . քանզի յանցանքնին ալ մեծ և ծանր ըլլալը
 գիտէին . և ասանկ բաներու մէջ շատ յանցանք ու-
 նեցող և խղճմտանքնին ծանրացած մարդիկ շատ
 կը վախնան : Գէշն այն է որ՝ սովորական եղած գէ-
 շութիւնները դիւական բաներ կարծելով՝ ազատե-
 լու համար անոր համեմատ դեղեր գործ կածէին .
 մէկ կողմէն ալ կը կարծէին որ սատայնաներուն հետ
 անմիջական կցորդութիւն ունեցող մարդիկ կան , որ
 կախարդ կըսէին , և ասոնք սատանային կախքը՝ և

սատայնան ասոնց կառքը կը կատարէ տէյի կարծիք
 կընկին . ուստի ասանկ կախարդներուն և (սլախըճի-
 ներուն և տալէթ ընողներուն և այլն) շատ սաստիկ
 պատիժներ կուտային : Այցած դարերուն ամէն
 օրինաց գիրքերուն մէջ՝ կախարդութեան վրայ խօսք
 կայ . այսինքն՝ անանկ կարծիքական յանցանքի մը
 վրայ՝ որ մարդոյս խեղքը չի սըղմիր , և ճիշդ գա-
 դափար մը չի կըրնար ցըցընել : Մինչև ժող դարուն
 վերջը հասարակաց մտաց մէջ կար այս կարծիքըս
 թէ՛ կախարդ կընիկներն են որ մըրիկներ կը հա-
 նեն . ուստի ասանկ կին ձեռլընին անցնէր նէ , ողջ
 ողջ կերէին . ինչպէս որ 1583 թուին երկու խեղճ
 կին երեցին ասանկ մտացածին յանցանքով՝ Բրու-
 սիայի Պէռլին քաղաքին մէջ : Ժող Դարուն մէջ և
 ժե դարուն սկիզբները՝ եկեղեցւոյ մէջ տեսակ տե-
 սակ երկպառակութիւն ձգող անկարգութիւնները՝
 որոնց համար առաջ ալ խօսեցանք , պատճառ եղան
 որ՝ ետքը Իգալիայի մէջ պաշտպանւած կարծիքնե-
 րը՝ Նէմցէստան շատ մարդ չընդունեցին : Ը Ին-
 նովկենտիոս պապը ինչ ընէ նէ աղէկ է . կախար-
 դութե դէմ մէկ սաստիկ կոնդակ մը հանեց 1584
 թուին : Այս կոնդակիս զօրութեամբը քիչ տարիի
 մէջ միայն թուէվիտի կայսրընարին երկիրը 6500
 մարդ մեռցուցին կախարդ են տէյի . ուրիշ գաւառ-
 ներուն համար ալ՝ ասոր համեմատ հասկըցիր . և
 այն ատենը աղէկ կիմանաս որ՝ մարդըս բնութեան
 ձեռքէն ելածին պէս մնայ , ամենևին կըթութեան
 տակ չի մըանայ նէ՛՝ արիւնատէր և դժուակ բան մը

Նէ : Այն ատենները կախարդութեան վրայ եղած սխալ կարծիքները՝ որքան զօրաւոր ըլլաւին հասկըցընելու համար այս ըսեմ որ՝ Լուտեր և Մելանքթոն աղանդապետները , որ իրենց կուսակիցները շատ կը հաւնին աղէկ աստուածաբան էին տէյի . և այն մարդիկն են՝ որ քրիստոնեայներուն շատը իրենց կողմը կըրցան քաշել , այս աստուածաբաններըս կախարդ կայ տէյի կը հաւատային ժղ դարուն մէջ : Ետքի դարուն մարդիկը շնորհակալ ըլլալու են Յովհաննէս Վիէռ անուն իմաստուն բժշկին , որ առողջ դատողութեամբ և բացայայտ պատճառներով հակառակ կեցաւ՝ հասարակաց մէջ տիրած կախարդութե՛ վրայօք կարծիքը ջրեց . և ասոր համար մարդկային ազգի բարերարներուն կարգը մըտնելու արժանի է : Մէկ կնոջ մը համար ամբաստանութի՛ եղաւ կախարդ է տէյի . այս մարդըս անիկայ պաշտպանեց և արդարացոյց՝ կախարդութի՛ը բոլորովին սուտ հանելով . և դատաւորներուն ձեռքէն կինը ազատելով՝ իրեն համար ալ կախարդ է ըսին * :

Ծա : * Կախարդութիւնը մտացածին բան մը կարծելը՝ Քօնախլէտքայ դըպրոցին համեմատ գալով՝ Ճօյաալ նոյն կարծիքին վրան է . բայց հին և նոր պատմութիւններուն վկայութիւնները՝ միայն իմ խելքըս չի հասնիր կոր ըսելով ջրեւը անհնար բան է : Եւ ասով Ճօյաալ՝ իրեն խելքին հասածը աշխարհքի մէջ ըլլալու բաներուն սահման դնող հեղինակներէն կըլայ : Միայն

Գ Լ Ո Ի Խ • Թ

Կրօնական մտքերու վրայ դաժանութի ,
և պաշտօնի և արարողութեանց վրայ ան-
տեղի բաներ :

1 . Դ Ա Ժ Ա Ն Ո Ի Թ Ի Ի Ն

Կրօնքի վերաբերեալ զգացմունքներուն ամենուն
մէկէն ավրվելը և ոչընչանալը՝ տգիտութեան պինտ
մեծ փնասն է : Քրիստոսական կրօնքը կը պատուիրէ
որ՝ ամէն մարդ մեզի եղբայր սեպենք , և իրարու
ըրաժ աղէկութիւններնուս համեմատ՝ վարձք կը
խոստանայ , և գէշութիւններուն համեմատ՝ պատիժ
կըսպառնայ . ուստի քանի որ քաղաքական կրթու-

այսքանս ըսենք որ՝ կախարդական արուեստը
հէմ կայ՝ հէմ շատ հին է . երկու կախարդ ալ՝
Փարաւոնի քով կար , որ Մովսէս մարգարէի
հետ վիճեցին . Սաւուղ Թագաւորն ալ՝ Սամուէլ
մարգարէն մեռնելէն ետքը տեսնել և բան հար-
ցընել ուզեցնէ՝ կնոջ մը կախարդութիւնովը
հարցընելէքը կըրցաւ հարցընել և պատասխանը
առնել :

Թիւն կայ՝ քրիստոնէական կրօնքին հետևող շատ կը գըտնըվի աշխարհիս ամէն կողմը :

Տգէտ մարդուն կրօնքը անոր կը դիտէ որ՝ ո՛վ որ իրեն պէս չի խորհրնէ՝ անիկոյ աշխարհիս երեսէն վերցընէ : Ժողովրդոց և թագաւորաց դէմ զէնք կառնէ • և քանի՛ մարդ ըսպաննած և քանի՛ թագաւոր ատուէն վար առած էնէ՝ այնքան եվէլ վարձք առնել կը յուսայ անդի աշխարհքը : Յովհաննէս Շադէլ անուն կրօնաւորը՝ Քրանսըզի քէնէրիկոս թագաւորը ըսպաննելու ետևէ եղաւ • պատճառ այս էր որ՝ ինքը ողջախոհութեան դէմ մեղք մը իրեն ունակութիւն էր ըրեր • և կը յուսար որ՝ այս թագաւորըս սպաննելով՝ եկեղեցւոյ օգտակար բան մը ըրած կըլայ , և աստուածային վրէժխնդրութիւնը իրեն մեղքին ութը աստիճան պատիժ պիտի տարնէ՝ այն սպանութեան վրայ պատիժը կիջնայ չորս աստիճանի : Ասիկայ իրեն խոստովանութիւնն էր : Այս հաշուիս վրայ թէ որ Շադէլը թագաւոր մը նալ սպաննէրնէ՝ քաշելու պատիժը ամէնն ալ կը վճարվէր • երբորդ անգամ ըսպաննելուն՝ արքայութեան դռները առաջը բաց կը գըտնէր : Տգէտներուն արամաբանելուն ճիշդ ճամբան այս է : Գանք հիմա պատմութիւնները աչքէ անցընելու :

ա • Հասարակութիւնը տգիտութեան վերջին աստիճանը հասած ժամանակները Եւրոպայի մէջ խաշակրաց պատերազմը բորբոքեցաւ , և երկու հարիւր տարիի մօտ քըշէց • 1096 էն մինչև 1291 : Երկի

մարդ, կընիկ մարդ, տղայք, ամէնն ալ զինուոր գըր-
 վեցան սուրբ երկիրը երթալու առնելու համար •
 էն քիչը՝ երկու միլեօն մարդ պակսեցաւ Եւրո-
 պայէն • քաղաքներ և բերդեր անասլատ դարձան •
 ամէն տեղ երկինն ողջ և իրենք այլի մնացած կը-
 նիկներ լեցուն էին : Ժողովուրդը շատ խեղճ ըլ-
 լալով կը յուսային որ՝ նոր երկիր առնեննէ՝ գուցե
 քիչ մը ապրուստնին աղէկ վիճակի դառնայ : Բար-
 քերնն ավրած ըլլալով՝ այս զինուորութիս՝ անային
 բարկութենէն ազատելու մէկ հարկաւոր միջոց մը
 կը սեպէին : Իրենք ռիսակալ էին, և կը կարծէին որ՝
 անհաւատներուն սրբան շատ վնաս հասցընեննէ՝
 այնքան աստուծոյ աչքը կը մըտնեն : Տգէտ ըլլա-
 լով՝ աշխարհիս վերջը մօտ կը կարծէին • ուստի պա-
 տերազմի մէջ մեռնելէն՝ շատ ծանր մէկ հետևութի
 մը և վնաս մը կըրնայ ըլլալ տէյի չէին հասկընար :
 Ասոնցմէ զատ, պարտքի տակ եղողները, որ շատ ալ
 էին այն խեղճութեան ատենները, և անողորմ ծա-
 ույութեան և գերութե մէջ ալ լինալու մօտ էին ,
 սուրբ երկիրը պատերազմ երթալուներուն հետ
 գըրվելով՝ իրենց վրայ առնելիք ունեցողներուն
 հալածումն ազատելու ճամբայ մը գըտած եղան :
 Այոքան շատվոր հասարակութե՛ն օտք ելլելուն պատ-
 ճառը ինչ որ է նէ՝ ելած պտուղները ասոնք են :

1 • Արձակումը գիւրին գըտնելու յուսով՝ շատ
 ծանր յանցանքներ գործըվեցան :

2 • Ամէն մարդ արուեստի և վաստակի լինալու
 տեղ՝ ըստակ թալլելու ետևէ ըլլալ մը սովորութիւն

եղաւ • ընտանեաց մէջ հանդարտ կենալուն տեղը՝
զօրաց յատուկ եղած անկարգութիւնները շտտցան :

3 • Այնքան մարդոց տեղէ տեղ փոխվելը՝ իրենց
բընիկ երկիրը մըտովնին տեղաւորված և խելքեր-
նին հասած կարծիքներն ալ փոխել տրվին • և այս
կարծիքներըս չարագործութեան դէմ զօրաւոր
սանձ են :

4 • Խաչակիրները Ասիա երթալ և անհաւատ
ջարդեւու իրենք զիրենք սորվեցընելու համար՝ Եւ-
րոպա Հրեաները ջարդել սկսան :

5 • Վարժեաց համար պատերազմ՝ ընելը՝ օրինա-
ւոր սեպվիլ ըսկըսաւ • ուստի ասանկ տգէտ կրօնա-
սէրները էզմը անհաւատներու արիւն թափելէն
ետքը՝ քրիստոնէի արիւն թափելն ալ իրենց աչքին
բան մը չերևնալ սկսաւ :

ԺԳ Դարէն մինչև ԺԸ դարը հազարաւոր և բիւ-
րաւոր մարդիկ՝ կախարդութեան և հերետիկոսու-
թեան և անաստուածութեան և թերահաւատութե
և ուրիշ ասանկ անյայտ յանցանքներու համար բըռ-
նեցին չարչարեցին, սպաննեցին • շատը ողջ ողջ այ-
րեցին , և շատին ալ պատկերները այրեցին հրա-
պարակաւ :

Ասանկ քրիստոնէութեան դէմ խելքերը և շփոթ
դաղափարները՝ փնասակար կիրքերուն ալ ընելու
դէշութիւններուն ընդարձակ ասպարէզ եղաւ •
ուստի առնելիք ունեցողները՝ ամենն ալ հերետիկոս
սեպվեցան, և միայն պարտք ունեցող մարդոց վկայ-
ութիւնը՝ անոնց հաւատքին ինչ ըլլալը հաւսըցը-

նելու հերիք կըլար : Ազէկ և գեղեցիկ ագարակ մը ունեցողին անունը՝ Թերասաւատ կը գընէին , որ անոր մօտինները անոր գետինը առնելու և իրենց մէջ բաժնելու իրաւունք ունենան : Մարդ մը մէկ գեղեցիկ աղջկի մը ունենար նէ՛ , այն մարդուն համար կախարդ է կըսէին , որ աղջկանն ալ կախարդութիւն չսորվեցընէ տէյի՛ ձեռքէն առնելու պատճառ մը ունենան : Աինը երկընէն զատվիլ ուղէր նէ՛ ամբաստանութիւն կընէր , երիկը կընկէն ձանձրացած ըլլար նէ՛ ամբաստանութիւն կընէր , և բոլոր ամբաստանութիւնները այս կերպ յանցանքներու վրայ կըլլային : Ո՛վ որ ռամիօրէն և աշխարհաբար լեզուով աղօթք կընէր , կամ աստուածաշունչին աշխարհաբար Թարգմանածը կարդալով կը հասկընար , ինչպէս որ քրիստոս ինքը քարոզած ատենը հրեաները կը հասկընային , այն մարդը հերետիկոս կը սեպվէր * , և Ինկիլթէռոա և Քռանսայի մէջ անիկայ ողջ ողջ կերէին : Ո՛վ որ մեռնելու ատենը իրեն օրինաւոր ժառանգները զրկելով իր

Ծա : * Ասանկներուն յանցանքը՝ աստուածաշունչին խօսքը հասկընալը չէր , ընդհանուր եկեղեցւոյ հասկըցածին պէս չի հասկընալ՝ և ինքն իր գլխիսուն վարդասպետութիւն հնարելով՝ և աստուածաշունչի խօսքը պատրուակ բըռնելով գայթակղութիւն հանէն էր : Եւ կերևի որ՝ Ճոյա՛ եկեղեցին ամբաստանողներուն և զրպարսողներուն խօսքին խաբված է :

մէկ մասը կրօնաւորներու և վարդապետներու կտակ
 չէր ընէր՝ հերձուածող կը սեպվէր, և քրիստոնէա-
 կան թաղում չէին ընէր անոր: Հերեթիկոս ըսված
 ազգերուն դէմ դաժանութիւն և կատաղութի չի
 ցըցընող և անուշութեամբ վարվողներուն ալ հերե-
 րիկոս կըսէին: Սէն Քօա հեղինակը Քռանսուա
 Տըլա Ժուժի անուն մէկի մը համար կըսէ. « Այս
 « մարդըս ուղղափառ քրիստոնէացի էր. բայց կրօ-
 « նաւորները ասիկայ հերեթիկոսներու կըռնակ է
 « տէյի հաւտըցընել կուղէին, քանզի Նառպօնա
 « դըմնըված Հիւկընօթ ըսված հերեթիկոսները
 « ջարդէրու համար եկած հրամանը չի կատարեց. և
 « կըսէին որ՝ քանի որ կալվինականներուն ձեռքէն
 « քաղաք մը առնըվէր նէ՝ ասիկայ միշտ իրեն զօ-
 « րացը կատաղութիւնը կը զըսպէր, մարդու մնաս
 « հասցընել չէր թողուր: Տօպինեը պատմիչը կըսէ
 « որ՝ պարսն Տըմօնվանին եղբայրը ուրիշ քանի մը
 « նալ հիւկընօթներով սպաննեցին Բռօվանս գա-
 « ւառին Տռակինեան անուն պըզտիկ քաղաքին
 « մէջ. սիրտը փորէն հանեցին և շններուն առաջը
 « նետեցին. շնները որ այս սիրտը չի կերան նէ՝
 « իրենք ալ ըսկըսան շններուն զարնել, » ասոնք ալ
 « հերեթիկոս են եղեր որ հերեթիկոսի սիրտ չեն
 « ուտեր » ըսելով: Արօժքի համար ամբաստանու-
 թիւններ այնքան յաճախ կըլլային՝ որքան որ յան-
 ցանքը մէկ ճիշդ սահման մը չունէր. և մարդոյս ալ
 մըտքին սոսկում մը բերելով կաղդէր: Եւ ամեն ա-
 ւան մէկ մարդուն վրայ դէշ և ատելի անուն մը դնե-

լը՝ անիկայ փորձով ըստուգելէն շատ դիւրին է :
 Ուստի ժգ դարէն մինչև ժը դարը՝ Եւրոպայի
 պատմութիւններուն ամէն երեսը մարդու արիւնով
 ներկրված կը գըտնես : Աւետարանը ամէն ազգաց
 իրար սիրել պատուէր արված իքէն՝ տգիտութիւնը
 կը թելադրէ որ կարծիքնին իրարու նման չըլլալուն
 համար իրար ջարդեն * : Այն մթին ժամանակնե-
 րուն պատմութիւնները կարգացողը՝ ուրիշ բան
 տեսնելիք չունի, բայց եթէ կրօնական մոլութիւնով
 վառված կրակներ, և աւելորդապաշտ մարդոց մեռ-
 ցուցածներուն ձայնը : Աթոլիկ, կաթոլիկ, հըր-
 տայ, բռթութեամբ, ամէն մէկը իրենց հաւատքին շի-
 տակ ըլլալը՝ իրենց թշնամիները սպաննելով հաս-
 տատել կուզեն : Ասլվին կըսէր հռոմեականներուն
 համար որ աններող (Թասիպ) են • ինքը Մեռվէդ
 անուն մէկը հաւատոյ զոյգք իրեն ունեցած տեղե-
 կութեանը դէմը ունենալուն համար՝ հրասպարակաւ
 այրել արվաւ Ճիննվաա քաղաքը : Արդեօք իրեն

Ծ* : * Այսքան խտութիւնը չարդարացընէնք ալ
 նէ՝ հաւատոյ կողմէն օտար վարդապետութիւն
 քարոզող մարդը ատելու՝ սուրբ գիրքերէն պատ-
 ուէր ունիլք • « Եթէ դք զվարդապետութիւնս
 զայս ոչ ունիցի՝ մի՛ ընդունիցիք զնա ՚ի տուն, և
 մի՛ ողջոյն տալիք նմա” : Եւ մարգարէն կըսէ •
 « Զատելիս քո տէր ատեցի, և ՚ի վերայ թշնամեաց
 քոց մտեցայ : Ատելութիւն կատարեալ ատեցի
 զնոսա, և եղեն ինձ թշնամիք” :

հաւատքը շիտակ ըլլալը հաստատուելու ասկէց ուրիշ ապացոյց (իսպաթ) մը չէ՞ր մի կըրնար գըտնել:

Է • Թագաւորները և իշխանները ուշ իմացան որ՝ հերետիկոսութեան յանցանքի համար մարդ մեռցընելով՝ ուրիշներուն գանակն ալ իրենց դէմ սըրցընելու պատճառ կուտային: Եւ յիրաւի ասոնցմէ դժգոհ եղողները և ապստամբները ասոնց դէմ ատելութի հաստատուել ուղեւով՝ կամ իրաւամբ կամ անիրաւութեամբ ասոնց վրայ ալ հերետիկոսութեան յանցանք ձգեցին • և խել մը անխոհեմ կրօնասէրներ կըրցան ոտք հանել զէնք առնել տալ ասանկ Թագաւորներու դէմ: Վամ իրաւամբ կամ անիրաւութեամբ ըսի • որովհետև եղած ալ է որ՝ կաթողիկ ժողովուրդը՝ կաթողիկ իշխաններ, և բռութէսթանները՝ բռութէսթան իշխաններ, իրենց հաւատքին հակառակ և թշնամի կարծելով մեռցուցած են: Ասոր վրայ մասնաւոր օրինակներ չպատմած ընդհանրապէս այս ըսեմ որ՝ մեզնէ առաջ եկող մարդոց կրօնքը՝ որ ոմանք այնքան կը գովեն, անոնց Թագաւոր սպաննելու թելադիր կըլար • գոնէ Քռանսայի մէջ • աւելի շիտակը ըսեմ • կրօնքը չէր անոնց սորվեցընողը, այլ կրօնք չգիտնալնին: Ասոր վրայ ՍէնՓօս մէկ դիտնալու արժանի պատմութի մը կընէ: « 1815 թուին օգոստոսի 18 ին, « Պօռտօ քաղաքը Անդրէաս առաքելոյ անուամբ « Մետրապօլտական եկեղեցւոյն մէջ՝ Սպանիայի « Տօն Քիլիբ իշխանին ու Քռանսայի Էլիզապէթ « իշխանուհիին կարգըվելուն հարսանեաց օրհնու-

« Թիւնը կատարված ատենը՝ Տօն Քիլիբիւն տեղը
 « Վիզայի դուքսը գըտնըվէցաւ : Սարկաւազը
 « սեղանին բուրվառ ընէլէն ետքը՝ կարգինաւ Տէ-
 « կօնտիսինաւ բուրվառ ըրաւ , բայց Թագաւորին
 « չըրաւ . և լուսարարները Թագաւորին հասկըցու-
 « ցին որ՝ ատեն մը տասնկ խունկ ծխելով՝ քանի մը
 « Թագաւոր Թունաւորեցին . և հիմա անանկ սովո-
 « րուծի ունիւք որ՝ Թագաւորին գըտնըված կողմի
 « սեղանին ալ բուրվառ չէմք ըներ” : Այս տեղս
 « քանի մը պատմութիւններ համառօտենք , որ կը ցը-
 « ցընեն Թէ կրօնական կարծեաց տարբերութե հա-
 « մար՝ քանի անգամ Թագաւորներ և իշխաններ մեռ-
 « ցուցեր են կամ մեռցընէլ ուզեր են :

1563 . Բօլդոօ անուն բոթէսթան ազնուա-
 կան մը Վիզայի դուքսը մեռցուց՝ որ հռոմէական
 էր : Բըռնեցին , և կըրակ կըտրած սքցանով (քէլ-
 բէթինով) միսը փետտելով մեռցուցին :

1581 . Քամբան անուն Ինկիլիզ Ճիզվիթ մը՝
 Ինկիլիզի Եղիսաբէթ Թագուհին ըսպաննէլու ըն-
 կերութիւն մը հանեց և գլուխ եղաւ . քանզի Թա-
 գուհին բոթէսթան էր : Բան մը չըրած իբէն ի-
 մացվէցաւ և կախեցին :

1584 . Բառուի անուն հռոմէական մը՝ նոյն
 Եղիսաբէթ Թագուհին ըսպաննէլ ուզեց . Բառուի-
 ն ազգականներուն մէկը Թագուհին իմացուց . և
 Բառուին մեռցուցին :

1585 . Պաղտասար Եւոառ անուն հռոմէա-
 կան մը՝ Օռանժ իշխանը մեռցուց , որ Օլանտայի

հասարակապետութեան հիմնադիրն էր • զինքն ալ չորս կըտոր ըրին :

1587 • Յովհաննէս Արտօն անուն փաստաբան մը՝ Քռանսայի Անկո քաղաքէն , կախեցին և մարմինը այրեցին • քանզի իմացվեցաւ որ յատկապէս Քռանսրզի ք Ջենրիկոս թագաւորը ըսպաննելու մըտքով իւր քաղաքէն ելեր՝ արքայանիստ քաղաքը եկեր էր : Այս ք Ջենրիկոս թագաւորը հռոմեական էր • և Քռանսրզները սուրբ Բարդուղիմէոսի տօնախմբութեան զիշերը բռօթէսթանները ջարդեցին նէ՝ այս թագաւորիս հաւանութեամբն էր • բայց տահա աւելի բռօթէսթանի արիւն չի թափելուն համար՝ հռոմեականներուն ալ աչքէն ելած էր :

1589 • Յակոբոս Աղէմէս անուն Դոմինիկեան կրօնաւոր մը՝ անմիտ և վարքը խառնակ մարդ մըն էր , և վերոյիշեալ ք Ջենրիկոս թագաւորը մեռցուց • պահապան զօրքը բըռնեցին • դատաստանը եղաւ և ողջ ողջ երեցին : Ատեն անցնելով՝ կոյր կրօնասիրութիւնը մինչև այն աստիճանը հասաւ որ՝ Փարիզ քաղաքին մէջ Յակոբոս Աղէմէսը իբրև սբ պատուեցին , և պատկերը սեղաններու վրայ ալ դրին :

1549 • Յովհաննէս Շաթէլ , որ Ճիզվիթներուն դըպրատունը կարդալ նորված էր , դաշնակով (խանչէրով) մէկ մը զարկաւ Քռանսայի ք Ջենրիկոս թագաւորին , որ հռոմեական էր , և շատ ալ աղէկ թագաւոր էր • միայն վերի պըռզունքը քիչ մը վերաւորեց , և առջային մէկը կոտրեց : Միսը աքցանով փետտեցին • ճիւղ պոչ կապեցին քաշեցին • երե-

ցին , և մոխիրը ցրուեցին :

1605 . Քանի մը ապստամբ մարդիկ ճիզվեթնե-
րուն Վառնէ անուն մեծաւորը իրենց առաջ-
նորդ ունենալով՝ Ինկիլիզի ան Յակոբոս Թագաւոր-
ը և բոլոր ընտանիքը և Թագաւորութեան մեծերը
մէկէն սպաննել ուղեցին . ժամանակով ասոնց դաւը
խմացվելով ոչընչացաւ . և պատմութեանց մէջ ան-
ուանի է՝ Վառօդոյ դաւադրութիւն անունով :

1610 . Արպատմը ի որ՝ Պէ Ջենրիկոս Քաան-
սըզի Թագաւորը՝ Բոսթէսթանները չի ջարդեր կոր
տէյի՝ կենացը դէմ յիտուն անգամ դաւադրութիւն
եղև : Քիանտուացի երկու Դոմինիկեան կրօնաւոր-
ներ , և մէկ Միլանու Քաբուչիններու վանքէն ե-
լած աշխարհական եղբայր մը յատկապէս Թագա-
ւորը սպաննելու համար Քաանսա եկան . բայց ա-
ղէկը այն եղաւ որ՝ հոն իրենց մահը գըտան : Քը-
նանտու Ռաւլայլեաք՝ որ առաջ կրօնաւոր էր Փա-
րիզ , և ետքը ցնորած տէյի անկէ վըռընտըվեցաւ ,
նամիկ խեղճ և կոյր կրօնասէրներէն մէկն էր . և
վերջապէս ասիկայ Պէ Ջենրիկոս Թագաւորը կըր-
ցաւ մեռցընել . բայց զինքն ալ Շադէլին պէս
մեռցուցին :

1757 . Քաանտուա Ռօպէռ Տամիան անուն մէկ
աշխարհական ռամիկ մը՝ Քաանսայի ժէ Լուդովի-
կոս Թագաւորը զարկաւ . բայց վտանգաւոր չէր :
Այն ատենները տահա Քաանսըզները երկու կողմ
զատված էին , մէկ կողմը Մոլինեան՝ և միւս կողմը
Յանսենեան աստուածաբաններուն կուսակից ըլ-

լալով: Ասոր ալ պատիժը եղաւ Շաթէլին և Ռա-
վայլեսօքին պատժոյն պէս:

Կարճ խօսիմ, այս քրիստոնէութեան դէմ կար-
ծիքը՝ թէ հերետիկոս մը թագաւոր պիլէ ըլլայ նէ՝
ըսպաննել պէտք է, անցեալ դարերուն մէջ ամէն
մարդու միտք տպաւորված էր մանաւանդ ժ՛ղ և ժ՛Է
դարերուն մէջ: Եւ սրովհետև այն դարերուն մէջ
կազէթա կամ բնաւ չկար, կամ խիստ քիչ էր, և
տպագրութեան ալ շատ մեծ ազատութիւն տըր-
ված չէր, ասկէց յայտնի է՝ որ կրօնական կոյր նա-
խանձաւորութիւնը բարբարոսութե՛ վերջին աստի-
ճանը հասնելու համար այս բաներուս կարօտ չէ:
Կերևի որ՝ ինչպէս որ գոլորշիքները սրխմըղելով
շատ ուժ կառնեն, անանկալ ծածուկ մընալը՝ կրօնքի
կոյր նախանձաւորութիւնը աւելի կուժովցընէ. և
ասոր փորձ մը նէ այն որ՝ Սիշիլիա իրիկվան ժամու
մը ատեն որքան Քռանսըղ և Բոսթէսթան կար նէ
ջարդեցին. որ շատ ատենէն այս խորհուրդը ծա-
ծուկ էր շարդողներուն մէջ: Կըրնանք ալ ըսել որ՝
ինչպէս որ կայծակնապահ գործիքին գաւազանները
(չուպուխները) և թէլերը ամպերուն մէջի ելեքաըր-
ականութիւնը կը քաշեն կը ցրուեն, և կայծակ ըլ-
լալու չեն թողուր, անանկալ բացբերանութիւնը՝
կրօնքի նախանձաւորութեան ուժը կը ցրուէ և կը
թուլցընէ: Ուստի ժանիքը կախ և լըռութիւն սի-
րող մարդոցմէն կը վախնամք. շատախօս մարդիկ
մեղ չեն վախցըներ:


՞ • Այս քրիստոնէութե՛ դէմ կարծիքըս հիմա

րոր քաղաքական կրթութեան տակ ինկած երկիր-
 ներէն վերցրված է • և ասով իշխաններուն և թա-
 գաւորներուն վախնալու կիրքերուն մեջէն ամենէն
 կատաղին ոչընչացած է • և ասոր պատճառ է փլի-
 սոփայութիւնը , որ ամէն մարդ իր խելքը հասած
 բանին հետևելու իրաւունք ունի կըսէ • և թէ որ
 կուզես՝ որ մէկը քու կարծիքդ և քու հաւատքդ
 ընդունի՝ անոր խելքը հասցընելու է • ուրիշ կերպ
 բըռնութիւն ընելը՝ ուրիշին միտքը իրեն մըտքին
 գերի ընել է • և թէ որ չի կըրցար ուրիշին խելքը
 հասցընելու նէ՝ յանցանքը քուկդ է • կամ դուն ալ
 աղէկ մը քու կարծիքիդ խելք հասցուցած չես ,
 կամ կարծիքդ շատ հաստատութիւն չի վերցըներ •
 ուրիշ կարծիք ունեցողը՝ բնաւ յանցանք ունեցած
 չըլլալով՝ պատժոյ ալ արժանի չըլլար : Այլ և՛ հա-
 ւատոյ վրայ մէկին միտքը ուրիշի չի յարմարիլը՝
 ինքնին ընկերական բարեկարգութեան դէմ բան մը
 չէ • մարդոյս տալու պատիժները մարդկան բարե-
 կարգութեան դէմ եղած յանցանքներուն պիտի
 ըլլայ • ուստի ասկէց դուրս ալ՝ մարդկային դատա-
 տանի տակ մըտնելու յանցանք չըլլար : Ասոնք փի-
 լիսոփայութիւնը սորվեցընելով՝ կրօնից կոյր նա-
 խանձաւորութեան դանակները կոտորտեց : Ասոր
 հետ միացուր շատ անգամ ըսած ընդհանուր օրէն-
 քիս գործը , որ՝ կիրքերը շատնալով սաստկութիւն
 նին կը թունայ : Ի՛նչ պատճառի համար որ շօնե-
 լով երկաթին ժանկը կերթայ և փայլունութի կըս-
 տանայ նէ՝ նոյն պատճառով ալ կրօնքին էփ աղէկ

աղտ մը եղող այս բարբարոսութիւնս վերցաւ : Տունս
տընէ բաժնող՝ և որդեոց որդի ժառանգութեամբ
անցնող ատելութիւններն ալ այս սպառնառով վեր-
ցան . և բարեկամաց մեջ ալ առաջին մըտերմութիւնը
չի մնաց . և ուրիշ ասոր պէս բաներ ալ՝ որ առաջ
ըսած եմք :

Այս ընդհանուր օրէնքիս գործը այս տեղըս նո-
րէն յիշեցընել հարկ էր . քանզի զոսպարտութիւնը
հիմա հին ատելութե՛հ հետ միանալով կըսէ որ՝ փի-
լիսոփայութիւնը կրօնքի թշնամի է . փիլիսոփայու-
թիւնը անհաւատութիւն և անկրօնութիւն կը սոր-
վեցընէ . մոռնալով որ՝ Վարդեսիոս փիլիսոփայն
աստուծոյ գոյութե՛ը նոր փորձ մը գըտնելով՝ ան-
հաւատ անուան արժանի եղաւ Վօէճիօ անուն
Բոսթէսթանէ մը : Մոռնալով որ՝ արևմտեան ե-
կեղեցւոյ մէջ նոր աղանդ հանող՝ և այնքան քրիս-
տոնեայները անկէց զատողները մէկ երկու աստ-
ուածաբան վարդապետներ էին, որոնց խելքին շա-
տութեանը մեծ նշան այն էր որ՝ կախարդութեան
կը հաւատային . և այն ատենի ժողովուրդն ալ կար-
դաւ գրէլ չգիտէին . և ասիկայ կը ցըցընէ որ՝ տը-
րամաբանութեան ցըցուցած շիտակ ճամբովը եր-
թանք նէ՝ ասոր ուրիշ սպառնառներ գըտնելու է .
և կը գըտնեմք ալ : Օրինակի համար՝ կրօնքի նա-
խանձաւորութեամբ ջարդըված այնքան մարդոց ար-
իւնը , և անոնց հառաչմունքները և աղաղակը՝ որ
պինտ տըգէտ մարդոց ալ հոգիին կը դըպչի . և կրօն-
քի անունով այնքան չարագործութիւն ընէլը՝ որ

կրօնքը անոնց հիշ մէկին հաւանութիւն չի տար , և
 գլուխը խելք ունեցող մարդը չընդունիր : Վարձ
 խօսիմ Քէնէլօն՝ կրօնքը սիրելի կընէ . Ռափայէսք
 և Յովհաննէս Շաթէլ և Յակոբոս Վղէմէս և ասոնց
 պէսերը՝ թէ որ կըրնան նէ աչքէ կը հանեն և ա-
 տելի կընեն . բայց չի կըրնալով ընէլ՝ իրենք ատելի
 կըլան . կրօնքը միշտ սիրելի է անոր համար ալ որ՝
 ասոնց գործքերը կը դատապարտէ :



2 . ԳԱՅԹԱԿՂՈՒԹԻՒՆ ՏՈՒՈՂ ԱՐԱՐՈՂՈՒ- ԹԻՒՆՆԵՐ

Տգէտները՝ քրիստոնէից եկեղեցական արարո-
 ղութեանը հետ անանկ անվայել և գայթակղութի
 տըվող արարողութիւններ խառնեցին՝ որ համրանքի
 չգար , և ասոնք միայն քաղսքական կըթուծուինը
 կըրցաւ վերցընէլ . անկէց առաջ ասոնք վերցընելու
 համար եպիսկոպոսները ճառեր խօսեցան , ժողովք-
 ները վըճիռներ տըվին . սրապերը բանագրանքներ
 հանեցին . աշխարհական իշխանները օրէնքներ շի-
 նեցին . ամենն ալ սլարապ գնաց : Այսպիսի արարո-
 ղութիւններուն երևելիներէն մէկը՝ որ է խենթե-
 րուն տօնը , Առթէնկա անուն հեղինակ մը ասանկ
 կըստորագրէ :

« Մարդուն մտքն հիշ ելլելու և մոռցըվելու չէ՝

« խենթերուն տօնը , որ դրեթէ բոլոր Եւրոպա
 « շատ ատեն կը կատարէին . և այս տօներուս մէջ
 « ծիծաղական հանդէսներու հետ անանկ լիբբ և
 « անառակ արարողութիւններ կերևէին որ՝ թէ որ
 « շատ մը խելացի և արժանահաւատ մատենագրաց
 « գիրքերու մէջ ասոր պատմութիւնը գրուած չըլ-
 « լար նէ՝ մարդուն հաւատալիքը չէր գար : Ամեն
 « տարի աթոռանիստ եկեղեցիները այս տօնիս նա-
 « խագահ ըլլալու մէկը կը նտրէին և խենթերու
 « արքեպիսկոպոս կը սէին . պազի տեղալ՝ խենթե-
 « րու պապ կը սէին : Ասոր ձեռնադրութե կերպը
 « շատ ծաղրական էր : Ընտրուած մարդը եպիսկո-
 « պոսական զգեստներ կը հագնէր . և ժողովորդեան
 « օրհնութիւն կուտար , երբեմն գլուխը եպիսկո-
 « պոսական թագ՝ և առջևէն խաչ ունենալով՝ եր-
 « բեմնալ պապերուն գլուխը դրած թագը գնելով՝
 « որ թիառա կըսվի : Առաջին անգամ ժողովուր-
 « դին երևցած օրը՝ իրեն լուսարարապետը արքե-
 « պիսկոպոսին կողմէն ժողովուրդին ներողութիւն
 « կուտար , ծանր և վեհանձն կերպով մը ոտանաւոր
 « մը կարդալով , որուն միտքը ասանկ բան մը նէր .
 « ”տէր արքեպիսկոպոսին կողմէն կը խնդրեմ որ՝
 « ձեր ամենուն սակառ (սէբէթ) մը լեցուն թողու-
 « թիւնով՝ լերդի (սև ճիւղի) հիւանդութիւն , և
 « կզակներնուդ տակը երկու մաս բոր խրկէ ան” :
 « Երկրորդ օրվան ըսելէն էր այս . ”տէր արքե-
 « պիսկոպոսը՝ որ հոս ներկայ է , քսան սակառ առ-
 « շայի ձև կը շնորհէ ձեզի , և մինչև հիմա ըրած

« շնորհքներուն վրան մեկ մը նալ խողի պոչ կու-
 « տայ” : Ասանկ արքեպիսկոպոսին քովի պաշտո-
 « նատարներն ալ իրեն պէս ըլլալու էին . և ասոնք
 « կը ըլլային այն եկեղեցւոյն քահանայները : Այս
 « տօնըս տասն և երկու օր կը քշէր . դեկտեմբերի
 « 25 էն մինչև յունվարի 6 . և այսքան օրվան մէջ
 « եկեղեցի գացողները երեսնին դիմակ (սուրած)
 « պիտի ունենային , և լածերնին կատակերգութեան
 « (քօմէտիայի) հագուստ պիտի ըլլար : Ոմանք
 « խեղկատակի (սոյթարիի) պէս կը հագվէին , ոմանք
 « հտպիտի (մուխալիթի) պէս . շատերն ալ երեսնին
 « տեսակ տեսակ աղտեղի բաներով կաղտոտէին սր
 « տեսնողները կամ խնդացընէն կամ վախցընէն .
 « ոմանք ալ կընիկ մարդու կերպարանք կը մըտնէին :
 « Դասերուն մէջ սաղմոսի տեղ անպարկեշտ խա-
 « դեր կանչելը հերիք չի սեպելով՝ խորանին վրան
 « ալ նարտ խաղալով կը զբօսնուին . պատարագիչ
 « քահանային քովը սեղան կը շիտկէին . քահանայն
 « պատարագելն լքէն՝ իրենք կուտէին կը խմէին .
 « բուրվառի մէջ խունկի տեղ գարշահոտ բաներ
 « կը ծրխէին , և ժողովուրդին անանկ գարշելի բա-
 « նով բուրվառ կընէին : Ժամերգութիւնը ըմբն-
 « նալէն ետքը կըսկըսէին եկեղեցւոյն մէջ խենթի
 « պէս վազվճառաբէլ կամ ցածկըռտեբ կամ կսքա-
 « լեբ այնքան անամօթութեամբ և լրբութեամբ որ՝
 « մէջերնին բոլորովին լածերը վրայէն ձգելով՝
 « մօրէ մերկ եղողալ կը գըրանըվէր : Ասոնք ամեն
 « ալ եկեղեցականներ էին . և երբեմն հետերնին

« աշխարհականներ ալ կը խառնըվէին , և կատակեր-
 « գութե՛ մէկ անձ մը նալ իրենք ձեացընելը պա-
 « տիւ կը սեպէին : Հասարակութեան համար հան-
 « դէսը կամ եկեղեցւոյն գաւիթը կը լար՝ կամ
 « գերեզմանատունը , և քահանայներուն մէջէն որն
 « որ այս հանդէսիս երևելի եղաւ՝ անոր մաղերն
 « ու մօրութիւնն այն տեղը կածիլէին : Խօսքերնին էր
 « անհամ և սիրիծ և աղտեղի և կոպիտ տրամախօ-
 « սութիւն (մուհալէրէ) : Ասանկ անձոռնի և գայ-
 « թակղեցուցիչ բան մը՝ ութը հարիւր տարիէն
 « ելել քէց Քաանսա , Սպանիա , Ինկիլթէռա ,
 « Նէմյէստան և Իտալիա . և արանց և կուսանաց
 « վանքերուն մէջ սիրէ մտաւ : Եւ թէ որ մէկ
 « մարդ մը մարդկային բնութե՛ր և կարողութիւն-
 « ներուն անխմանալի տկարութիւնները իմանալէն
 « ետքը կըրնայնէ զարմանալ՝ անոր ասիկայ աւելի
 « զարմանք սիրի բերէ որ այսպիսի անձոռնի խեն-
 « թութիւնները այն ժամանակի մարդոց խելքովը
 « քրիստոնէութեան համեմատ արարողութիւններ
 « էին . և ո՛վ որ ասոնց դէմ բան մը ըսելու համար-
 « ձակերնէ՛ այն մարդը հասարակութեան աչքին
 « առջին հերետիկոս և բանադրամքի արժանի կը
 « սեպվէր :

Էշու տօն մը նալ ունէին այն ատենական մարդի-
 կը . մէկ կին մը փառաւոր հագուստները կը հագ-
 վէր , գիրկը տղայ մը կուտային . փառաւոր զարդար-
 ված էշու մը վրայ կը նստեցընէին , և սանձէն (կէ-
 մէն) բռնելով՝ թափօրով մինչև սեղանին առաջը

կտանելին : Հոն մեծ հանդէսով ճայնաւոր պատա-
 րագ կըլար . իշուն ալ սորվեցս ցած էին որ՝ պէտք
 եղած ասեննեքը երկրպագութի ըրածի պէս ծուն-
 կը կոտրէ : Այս իշուն պատիւ մէկ երգմը շինած
 էին որ կը կարդային , երգը հէմ անօրէն՝ հէմ տը-
 ղայական . և պատարագը լումննալէն ետքը պատա-
 րագիչ քահանայն՝ օրհնեալք եղերուք ըսելու տե-
 ղը՝ երէք անգամ կը զըռար . ժողովուրդն ալ ամէն
 կամ փոք քեզ տէր աստուած մէր ըսելու տեղը՝
 նոյնպէս երէք անգամ կը զըռային :

Թէ գիշերվան և թէ ցերեկվան թափորներուն՝
 որ մեր նախնեացը շատ սիրած բանն էր , գլխաւոր
 պայմաններուն մէկը կերևի թէ մերկութիւնը պիտի
 ըլլայ . ուստի չէ թէ միայն մերկ տղայք հանդէս
 կէլէին , որ մինչև ժր դարը քշեց , այլ և մերկ
 երիտասարդներ ալ սուրբ Վարպէտի նմանութի
 կընէիք ըսելով , մինչև մերկ կանայք ալ . որ երբեմն
 կը խաղային կը կաքաւէին կռապաշաններուն Սիրէնէ
 ըսած կընիկներուն նմանութեամբը , կամ Մագ-
 դաղէնացիին և Մարիամ Եգիպտացիին ապաշխա-
 րելու նմանը կընէին . բայց միշտ վրայի լաթերնին
 պէտք եղածէն քիչ ըլլալով :

Խարազանակիր (խամչիլի) ըսվածներուն թա-
 փորը ելուղներն ալ կիսամերկ պիտի ըլլային . և այս
 թափորըս 1200 թուին ասեննեքը ըսկըսելով՝ ե-
 րէք հարիւր տարի քըշեց : Ամբողջ քաղաքներու
 բնակիչներ իրենց տեղէն ելլելով՝ և քուռչ և հին
 ու մին բաներ հագնելով և մշքերնին շուան կա-

այելով՝ իրարու այցելութեան կերթային . կէս մարմիննին ալ բաց էր . և ձեռքերնին ամուր ոլորված խարազան (խամչի) կըլլար , թափորին գլուխը բոպիկ ոտքով քալելով եպիսկոպոսներ , աշխարհական իշխաններ , ազնուականներ կը տեսնուէին . առջևնուն ալ այն քաղաքին դրօշակը և խաչալէմ մը կերթար : Այս ըսած մարդիկը ուզէին չուզէին՝ այս թափորիս հարկաւ պիտի գըտնուվէին : Քսան հազարէն աւելի Պօլօնեացիք ատեն մը Իմօլացիներուն երթալ այցելութիւն ընելէն ետքը Մօտէնա եկան : Թափոր մը նալ Մօտէնացիք շիտկեցին գացին Ռէճճիօ . այն տեղացիք ալ թափոր շիտկելով և Մօտէնացոց հետ միանալով անցան Բառմա . և ասանկ ետևէ ետև գրեթէ բոլոր Իտալիա ելան : Միլանու Թօռռիանի իշխանները չուզէցին՝ որ իրենց քաղաքն ալ ասանկ այցելութի ընողներ գան . ո՛վ որ գայ նէ կը կախենք տէյի հրատարակէլէն ետքը՝ վեց հարիւր հատ ալ կախազան (տառաղաճի) շինեցին . այս սպառնալիքիս վրայ այն քաղաքը մըտնելու մարդ չի համարձակեցաւ :


Ասոնցմով և ուրիշ ասոնց նման խեղկատակ արարողութիւններով՝ մարդուս սրաին մէջ կրօնական զգացմունքը բոլորովին կը խեղդուվէր . ինչպէս որ արաին մէջ անպիտան խոտերը շատնան նէ՝ ալէկ ցորենը կը խեղդեն : Առաքիլնիներուն խոստացված վարձքերը՝ և չարագործներուն սպառնացված պատիժը մըտածելու համար խեղքերնին գլուխնին ժողվելու և ամփոփ բռնելու տեղը՝ ասանկ ծիծաղելի

և ծաղրական և գայթակղութիւն տրվող բաներով և արարողութիւններով կը ցընդէին • ասոր համար է որ՝ ասանկ արարողութիւնները և հանդէսները շատ եղած ատենը՝ հասարակաց վարքն ալ շատ ավրելած էր • ինչպէս որ քաղաքավարութեամբ ”ծառայ եմ” ըսողները որքան շատնաննէ՝ իրօք ծառայութիւն ընելու կամ գործիք գըտնելու մարդ այնքան քիչ կը գըտնես : Արտեսներք որ գետնի տէր եղող պարօնները՝ որ գազանի պէս անգութ և անառակ մարդիկ էին , և մարդ սպաննելը սրպէս թէ իրենց արուեստն էր , ամենն ալ իրենց տանը մէջ ժամատուն ունէին • և ժամերգութիւն ընելու համար քանի մը քահանայներ կը պահէին • ասկէց չէր կըրնար հասկըցիլ որ՝ այս մարդոցը վարքը շատ մաքուր և անարատ եղած ըլլայ • ինչպէս որ մէկուն պահանջին մէջ շատ գիրք ըլլալէն չի հասկըցիլ որ այն մարդը շատ կարգացող եղած ըլլայ : Ասոնք ամենը՝ ասանկ կը վայլէ տէրի եղած բաներ են • ասանկ բաներէն ասկէց եվէլ բան չի հասկըցիլ * :

Քիչ մը պատմութեանց տեղեակ ըլլալը բաւական է գիտնալու որ՝ անցած ատենները մէկ մարդ մը թշնամիէն վրէժ առնել ուզէր նէ՝ անոր եկեղեցւոյ մէջ կը սպասէր , և սեղանին առաջը կը մեռ-

Ծառ : * Արօնական զգուշութիւնները և կրօնասիրութիւնը պախարակել չէ՝ հեղինակին միտքը , այլ ասանկ բաները բաւական են կարծելով՝ վարքերնին շիտկելու չի հետեւիլ կը պախարակէ :

ցընէր : Եկեղեցիներուն մէջ զէնք ունենալով եղած
 գողութիւնները անտանելի բաներ էին • բարե-
 սլաշտ գործքերը ավրւված և վտանգաւոր գործքեր
 դարձած էին • և ուրիշ շատ գանգառներ կան ասոնց
 համար • և ասանկ պատճառներով Եւրոպա գիշե-
 րային ժամերգութիւնները և թափորները վերցան :



Գ Լ Ո Ւ Խ • Ժ

Ընցեալ դարերուն մէջ ժողովուրդին
 պատուոյն (ըռզին) դէմ նախատինքներ :

Ս • ԺԴ Պարէն առաջ եղած թէադրոյի խեղ-
 կատակութիւնները և խաղերը պարկեշտութեան
 վայելուչ բան չեն • ինչպէս որ այն ժամանակի պատ-
 միչմը կը գրէ * : Պետրոս Ազարիոս մէկ ուրիշ հե-
 ղինակ մը հանդէսի մը պատմութիւն կընէ , որ ժԴ
 դարուն մէջերը Բալթայի քաղաքին մէկ հրատարա-

Ծ * : * Ճօյա այս տեղըս այս հեղինակին զրուցա-
 ծը երկարօրէն կը գրէ • բայց մէնք թարգմանելը
 անվայել սեպելով ձգեցինք , քանզի կարդացու-
 ղին փշաքաղել մը կու գայ :

կը ըրին • և Բալիայի համալսարանին ուսումնական վարպետները և բոլոր քաղաքացիք հոն գըտնըվեցան : Այս հանդէսիս ալ պարկեշտութե և զգաստ վարուց նշան ըսել չէր վայլէր : Աշխարհքի մէջ ամէն տեղ և ամէն ատեն , և հիմա ալ խաղալ և կաքաւել կոյ • բայց ծանրութեան և վայելչութեան վրայօք մեր ունեցած գաղափարը չի ներեր մեզի որ՝ յարգի և մեծ մարդիկ ալ ելլեն խաղան : Անցեալ դարերը՝ մինչև ժէ դարուն մէջ՝ արտաքին հանդէս եղած ատեններն ալ եպիսկոպոսներ , և արքեպիսկոպոսներ կը խաղային և կը կաքաւէին • ինչպէս որ Ինկիլիզի ք Ռիչառ Թագաւորին Թագադրութե հանդէսին օրը եղաւ Վէսթմինսթէռ պալատին սրահը : Քռանսայի և Իդալիայի համար ալ ՍէնՓօս կըսէ • « Մեծ իշխանութեան և պետութե « լիակատար ժողովքը՝ եօթը կամ ութն օր մը կը « քըշէր • և այս օրերըս զինախաղութիւն՝ և պա « տերազմի վարժութեան վերաբերեալ խաղեր կը « լար • և կերակուրէն ետքն ալ կաքաւ (պալօ) կը « նէին : Քռանսայի ժբ Լուդովիկոս Թագաւորը « պետութեան լիակատար ժողովք բացաւ Միլան « քաղաքը 1501 թուին : Շատ մեծ փառաւորու « թիւնով կաքաւներ եղան հոն • և Նաուպօն և « Սանսէվէռինօ կարդինալներն ալ ելան կաքաւե « ցին : Բալալիչինի կարդինալը կը պատմէ որ՝ « 1562 թուին՝ Թրիտէնդինոյ ժողովքին ժողվ « ված հայրապետները խօսք ըրին որ՝ Սպանիայի « բ Փիլիպպոս Թագաւորին մէկ խաղալու հանդէս

« (պալօ) մը ընեն : Քաղաքին ամեն աղնուական
 « կանայքը հոն կանչելէցան . և Մանդուայի կար-
 « դինալը կաքաւին սկիզբ ըրաւ . Փիլիսոսոս թա-
 « գաւորն ալ ժողովքին հայրասկեան ալ ամենն ալ
 « խաղացին :

Է . Նորեւուկ զարդերու վրայ խօսած տեղըս մեկ
 բանաստեղծի մը խօսք յիշեցի, որ հիմակվան նորե-
 շուկ ձևերը բամբասելու համար՝ հիներուն հա-
 գուստին պարկեշտ կերպը կը գովէ . և ասով կը ցը-
 ցընէ որ պատմութիւններու շատ տեղեկութիւն չու-
 նի : Այս տեղըս ասիկայ հաստատելու համար
 պատմութիւններէն քանի մը փորձ գրենք :

1 . ԺԴ և ԺԵ և ԺԶ Դարերուն մէջ Ինկիլիթէա-
 ռա տեսակ մը հագուստ կար, վարալքը խիստ նեղ,
 և վրայի հագած հանդերձը խիստ կարճ, անանկ որ՝
 ասիկայ հագնող մարդը ոտքի վրայ կայներ նէ՝ ետևի
 դիէն կէս մէջքէն վար բաց կը մնար . 1463 թուին՝
 բառլամենթը այս կերպ հագուստ հագնելը արգե-
 լեց ալ նէ՝ անկէց ետքը քիչ մը ատեն տահա քըշեց :

2 . Մօնթէներ, որ ԺԶ դարուն ատեններն էր ,
 և բարոյականի կողմէ ալ շատ խիստ մարդ մը չէր ,
 կը դատապարտէ այն սովորութիւնը՝ որ կընիկ մար-
 դիկ իրեն գլխարկներուն և կուրծքերուն վրայ զար-
 դի համար անամօթ նշան մը կուեննային , ինչպէս
 որ հին կռապաշտները պարտիզպանութեան շաստ-
 ուածը կը նկարեն :

3 . Այս տեղըս յատկապէս կուսումնֆանթանթե
 ըսված կանայցի լաթը (չէրչիվէլի Փիստանը) յիշեւ

կը վայլէ, որուն սովորութիւնը հիշ որ չէնէ Իդա-
 լիայի մէջ մինչև 1780 Թուին ատենները մնաց :
 Յայտնի է որ՝ ասիկայ հագնող կընիկ մարդուն հա-
 սակին երէք մասին երկուքը՝ ասկ չունեցող լոյն
 տակառ (Ֆըշի) մը կը դառնայ : Առաձգական շըր-
 ջանակներով (չէմպէրներով) ուռած հանդերձը
 (Ֆիստանը) կնոջ հասակը ծածկէլէն զատ՝ յղութե
 նշան ալ չէր ցըցընէր • ուստի գէշ վարք ունեցող
 աղջիկներուն ալ խայտառակութիւր կը գոցէր : Անոր
 համար Քռանայի շատ տեղ այս հանդերձիս քաշ
 պալտա կըսէին, որ անհարազատ տղայ սահող ըսեւ
 է • Իտալերէն հոստափինֆանիէ բառն ալ՝ նոյն նշա-
 նակութիւնը ունի :

4 • Արնիկ մարդոց հագուստին նորաձևութիւր՝
 անոնց կուրծքը և փորը գոցելն է • ատեն մը երիկ
 մարդիկ գլուխնին անանկ բան մը կը դնէին որ ե-
 րեսնին կը գոցվէր : Լոմպարտեան տերութե խըն-
 դիրքներուն մէջ ժէ դարուն ատենները կը գրէին
 որ, « Է՛փ աղէկ ատեն կայ որ՝ (շափղայի) տեղը
 « յեմբէտ անուանով տեսակ մը գլխարկ դնել սովո-
 « րութիւնն եղած էր • և այս գըլխարկըս անանկ շին-
 « ված էր որ՝ ձևը քիչ մը լոյնցընելով մարդուն
 « երեսը կը գոցէր և դիմակ (սուրաթ) կը լար •
 « հագնողը կըրնար ուղած ատենը վէր առնել, վար
 « ինջեցընէլ • որով գէշ մըտքի պըտըտողները չի
 « ճանչըրվելու և չի յայտնըվելու և սպառիժ չի կրե-
 « լու համար կը վարվէին • ուստի ասանկ գլխարկ շի-
 « նելը և ծախելը և գործածելը արգէլէալ է • և

« որի քով գըտնըվինէ՝ 100 ռէալ տուգանք պիտի տի տայ » : Հիմակվան գլխարկներուն վրայ անանկ խարդախ վարպետութիւն մը չկայ որ՝ մարդ երեսը դիւրաւ ծածկէ , և առանց ճանչցըվելու ընելիք գէշութիւնը ընէ , և պատժելու իշխանութիւն ունեցող կառավարիչներուն ձեռքէն ազատի : Այն հին՝ և բանաստեղծին պարկէշտ տէյի գոված գըլլ խարկը՝ հիմա աւազակը և մարդասպանը միայն գործածելու կարօտ կըլլայ , որ չի ճանչցըվելու համար երեսը գոցել կուզէ : Հին ատենի ծիծաղելի զարդերուն վրայ երկան խօսք խօսիլ պէտք չէ , որ մէկ ոտքին գուլպան մէկ գոյն՝ մէկալինը մէկ ուրիշ գոյն մը կըլար , և երկի մարդիկ գէր երևելու համար շատ լաթ կը հագնէին , և փորերուն վրայ շատ մը գօտի իրարու վրայ կը կապէին * , այլ միայն այս ըսեմ որ՝ ժե դարուն մեջ կընիկ մարդոց գըլլսը դրած գլխարկը՝ մէկ աշտարակ մը կը նմաներ , երկու կողմէն ալ եղջիւրի պէս մէյմէկ բան կերկըննար , որ դէպ ՚ի ծայրը երթալով կը ծըռէր . և այս գլխարկըս այնքան երկայն և լայն կըլար որ՝ երբոր Քըռանսայի զ Աարոլոս Թագաւորին Թագուհին Էլիզապէթ Պափիեռացին՝ 1416 Թուին Վէնսէն քաղաքը ատեան մը բացաւ նէ՝ պալատին ատենին սենեակին դուռը քակել , բարձրացընել և լայնցը-

Ծա : * Ատեն մը Օսմանեան տէրութեան մեծերն ալ , և մանաւանդ զօրապետը (եէնիչէրի աղասին) այս սովորութիւնս ունէին , հիմա չկայ :

նեւ հարկ եղաւ, որ Թագուհին և հետը եղող խա-
 թուանները իրենց գլխարկովը կարենան դրուէն
 ներս մըտնել: ՍէնՖօս անցեալ դարուն համար կը
 պատմէ որ, երբոր Քէժաք վանքին աբբայն նոր
 պաշտօն առնելով՝ առաջին անգամին Քէժաք քա-
 ղաքը մըտնէ նէ՝ Մօնպոէօն և Տըլաուօք իշխան-
 ները՝ խեղկատակի (սոյթարիի) լաթ հագած, և մէկ
 ոտքերնին ալ բոսիկ ըլլալով կը պարտաւորին աբբայ-
 ին առջևէն իյնալ, և աբբային հեծած մատակ (խըս-
 րախ) ձիուն ալ սանձը բռնելով մինչև վանքը տանիւ
 Հօն կը հասնին, և աբբայն ու խեղկատակները մէկ
 տեղ հաց կուտեն. անկեց ետքը իրարմէ կը զատվին:
 Գ. ԺԵ և ԺԶ Գարուն մէջ հանդիսաւոր հացկե-
 րոյթներուն համար անամօթ ձևերով խմորեղէններ
 կը շինէին. և անոնց տըված անուանին զրուցելու
 մարդ կամընայ: Շամբիէ անուն հեղինակ մը՝ որ
 ԺԶ դարուն ատենները կը գրէր, ասո՛ք պատմելէն
 ետքը կըսէ. հասարակաց վարքն ու բարքը այնքան
 ավրված են որ՝ անպատկառ և գարշելի բաներու
 անունով և ձևով ուտելիքներ կը գըտնելին կոր
 քրիստոնէից կերակուրներուն մէջ: Նոյն դարերուն
 և ԺԵ դարուն մէջն ալ Քռանսըզները հացկերոյթի
 ատեն աղբիւրներ կը շինէին, որ գինի և իբօքուս
 ըսված խըմելիքը կը վազցընէին կամ կը ցածկեցը-
 նէին շատրուանի սէս * : Նոյն ատենը սեղանա-

Ծ. * Իբօքուս ըսվածը՝ գինիով շոքարով և
 Թառչինով շինված խըմելիք մը ներ:

տունին օգը անուշահոտ ընելու համար վարդէջուր
 ալ կը վազէր, և այսքանըս աղէկ և գովելի սովոր-
 ութիւն: Բայց պարկեշտութեան վրայօք անոնց
 միտքը մեր միտքէն շատ տարբեր էին: Այդ ըսած
 խմելիքներըս վազեցնող աղբիւրները այլ և այլ
 ձևերով շինված կըլային: Երբեմն քարէ քան-
 դակած կ'ին մը կըլար, և իբօքուսը ստինքներէն կը
 վազէր, երբեմն տղայ մը կըլար՝ որ վարդիջուր կը
 շռուէր, երբեմն պըզտիկ աղջիկ մը կըլար, և գլինին
 անոր չի զուրցըվելու տեղէն կը վազէր: Քոստանայի
 ԺԴ և ԺԵ Լուդովիկոս Թագաւորներուն օրը, ԺԵ
 դարուն վերջը և ԺԸ ին սկիզբը, Քոստանայները
 սեղանի գլուխ ամէնը մէկանց խաղ կանչել, և խը-
 մէլէն զատ՝ կանանց հետ ալ անվայել կատակներ
 կընէին, որ հիմա չի կըրնար ըլլալ, և այն ատենվան
 բանաստեղծներուն մէկը կըսէ որ՝ « հիմա ասանկ
 և բաներուն վրայ չեն խնդար, միայն Թեթև քըմ-
 և ծիծաղ մը կըլայ, մեր հեշտութիւններն ալ ձանձ-
 ւ րութեան մօտեցան:

Դ. Անցեալ դարուց սովորութիւնները քննե-
 րով՝ քաղաքական և պատժողական ատեաններուն
 մէջն ալ պարկեշտութեան դէմ բաներ կը գտնեմք:
 Ո՛վ որ իր պարտքէն ազատելու համար իր ունեցած-
 ները ամէնն ալ կը ձըգէր՝ Իդալիայի ատեաններուն
 կանոնովը կը պարտաւորէր որ վարախօք հանէր, և
 ետևի դիտվը երէք անգամ խայտառակութեան քար
 ըսված քարին վրան զարնէր՝ շատ մը մարդու առաջ,
 և այն քարը հրապարակը դըրված էր: Ալին մը իւր

երկանը անկարողութեանը համար ամբաստանելով
կարգը վիւ ուղած ատենը՝ դատաւորաց առաջը եր-
դում ընելու կը պարտաւորէր . և երդում ընելուն
ձեւը և արարողութիւնը պարկեշտութեան և ամբը-
կոտութե՛ շատ դէմ էր : Այս սովորութիւս գրեթէ
հասարակաց էր ամէնուն թ և թ և ժ և ժ ք դարե-
րուն մէջ : Պատժողական օրէնքի մը մէջ անանկ
գըրված կը գըրտնեմք որ՝ որսական շուն գողցող
մարդը՝ այն շունը իր ուսին (օմուզէն) վրան առնէ ,
հասարակաց հրապարակին բոլորը երէք անգամ պը-
տըտի , ետքը շանը պուչը վերցընէ և տակը պագնէ
և անանկ տայ տիրոջը : Թէ որ մէկը բազէ գողնար
նէ՝ որ որսորդներուն աչքին շատ մեծ բան էր , այս-
քան ըռէալ առգանք կը տըրված էր , բայց թէ որ
տուգանքը տալու կարողութի չունէր , իր մըսին կա-
կուղ տեղէն բանալու , և բազէին՝ օրէնքը սրչափ
հրաման ըրած էր նէ՝ այնքան միս կերցընելու էր :

Այս օրէնքըս ոչ պարկեշտութեան նշան մը կը-
ցըցընէ և ոչ գթութեան : Քոանսայի շատ տեղ ա-
նանկ օրէնք կար որ՝ շնացեալ մարդը օրհարսը կվան
ատեն մօրէ մերկ քաղսքին փողոցները կը պըտը-
ցընէին . և Տօֆինէ գաւառին օրէնքը կըսէ որ՝
" թէ որ մէկը շնութեամբ բռնըվինէ՝ կամ քաղսքին
մէջ մօրէ մերկ պըտըացընեն , կամ վաթսուն սօլտի
տուգանք առնեն " : Վերջապէս՝ մեզնէ առաջ ե-
կողներուն բարքը և սովորութիւնները ո՛ր կողմն
որ նայինք նէ՝ նախանձելու արժանի բան մը չէնք
կըրնար գըտնել . և ասկէց կը մակտբերեմք որ՝ հար-

կաւորասպէս կրթութիւնը մարդոյս շատ թերութիւնները վերցընելուն համար պիտանի է :

” Մինչև հիմա կերակուրը պատրաստեցի առաջըդ դրի՝ և միայն ուտելու հոգը քեզի թողուցի ” կըսէ բանաստեղծ մը :

Քեզի ամէն բանէն առաջ՝ քովըդ գըտնըվողներուն ղգոյարանացը կամ երևակայութեանը ծանր եկած բանը , և այն բանին երևոյթն ալ քեզնէ հեռացունել սորվեցուցի . դուն քեզ անանկ բըռնէ որ կոյնըվածքըդ և շարժմունքըդ շնորհօք և առանց խեղճփնալու ըլլայ . խելացի մարդիկ քովոդդ խընդացընելու կամ սիրտերնին խառնըվելէք բերելու բան մի՛ ըներ . ուրիշներուն միտքը զուարճութիւն բերելու բաներ բէր՝ սիրտ կոտրելու բաներ մըտքերնին մի՛ բերեր : Ուրիշը մէկ անվնաս բանի մը կը փափաքի նէ՝ անոր կամացը ծառայելու առաջ նետովէ . հարկ չեղած տեղը անոր կամքը չիկատարելով՝ փափաքը ուշացընել կամ խափանել մի՛ ըներ . մէկ մարդուն մըտքին և կամքին հակառակ գալով, կամ անոր խելքը քուկինէդ կարճ ցըցընելով՝ անոր սիրտը մի՛ ցաւցըներ :

Հագած լաթըդ անանկ ըլլայ որ՝ կըծոտի անուն ալ չի վաստըկիս , քու վիճակիդ և քեզի վոյելածին ալ սահմանէն դուրս չելլէ : Թէ որ հագուստիդ փառաւորութիւնը գովելի ըլլալ կուղէս նէ՝ խենթ կը սեպվիս . նմանասպէս թէ որ հասարակութեան՝ մարդը իր հագուստէն դատելու կարծիքը բանի տեղ չի սեպէս նէ՝ խենթ ես : Ուստի երբ կը տեսնես որ

գըտնելած երկրիդ սովորութիւններն ու կերպերը՝ ոչ պարկեշտութեան դէմ են, ոչ վայելչութեան և ոչ առողջութեան, անոնց համեմատելու նայէ :

Կամ հպարտութեամբ՝ կամ մլտամլտութեամբ ունենալ կեղծելով՝ մեկին բարեւ չիտալիք չընես • նոյնպէս դուն քեզ ցըցընելու կամ ուրիշին շողոքորթելու համար ալ՝ ամէն տեսածիդ բարեւ տալ և որպիսութիւնը հարցընել մի ընէր :

Մէկը քեզի այցելութեան գալու ըլլայ նէ՝ ամէն գործովդ և խօսքովդ անանկ պիտի ցըցընես որ՝ անոր գալուն շատ ուրախացերես • և դուն ալ թէ որ կամ բարեկամութեան կամ ընտանութեան կամ յարգելու կամ շնորհակալ ըլլալու համար մեկին տեսութեան երթաս նէ՝ մի մոռնար որ անոնց գործոյն ատենէն ժամանակ կը գողնաս, և կարելի է որ այն գացած մարդուդ՝ քու երթալդ ձանձրութիւն բերէ • անոր համար պէտք չէ որ հոն շատ նըստիս :

Շատ քաղաքավար երևելու համար անքաղաքավարութիւն ընելէն՝ և չափազանց աղնուութի ցըցընելով կոպիտի կարգ անցնելէն զգուշացիր : Թէ որ անապարծներուն և շատղրուցներուն հետ շփոթիլ չես ուզեր նէ՝ խօսքով խոշոր խոշոր մի բըրդեր, չեկրնալ ընելու բանըդ մի խոստանար :

Մըտքիդ գաղափարները աղէկ կարգի դրած ըլլալու ես • պատմածըդ ճիշդ և անսխալ, խօսքըդ կարճ, միտքդ աղէկ բարուց համեմատ • ռամկական երկրէլմութի (թէճնիս) մի խառնէր խօսքիդ, ցած խօսքեր, անառակ և լիբբ մտածութիւններ խօսքիդ

մէջ ամեւելն լըսվելու շէն . մէկ դիէն ալ ըսած խօս-
քըդ յըստակ իմացվելը հերիք սեպէ՛, բարակ խօսիմ՝
ըսելով ինքնահաւան իմաստակներուն կարգը չանց-
նիս : Բանաստեղծին խրատը մըտիկ ըրէ՛, որ կըսէ .
« Որո՞ւ հետ և ի՞նչ բանի վրայ և ի՞նչ պատճառնե-
« ըով խօսիլուք մըտքէդ մի հաներ . հետաքրքրուԹի՛
« ընելով՝ խօսքիդ տակը կորեկ ցանողէն փախի՛ր .
« քանզի անանկները բաց բերան ալ կըլլան . որքան
« խորհրդասպահուԹի՛ ապըստըրես և անկաճնին ՚ի
« վար խօսիս նէ՛ խորհուրդ պահելիք չունին . և մէկ
« անգամ բերնէդ ելածը կը թռչի կերթայ , ետ
դառնալիք չունի :

Առաջկուց ըսի քեզի թէ՛ տղոց հետ ինչպէս
զուարճալի կատակներ պիտի ընես , կանանց հետը
ազնիւ և մարդավարի պիտի կենաս . և ծերերուն
հետ ծաղրը կատակը մէկդի ձգելով՝ համեստ և
պատկառանքով պիտի վարվիս :

Ամէն մարդ քեզի բարեկամուԹեան մի՛ ընդունիր
որ՝ ետքը չի զղշաս . բարեկամուԹե՛ իրաւունքները
ուզելէն աւելի նայէ՛ որ՝ պարտքերը վճարես . նայէ՛
որ բարեկամըդ քեզ գովելէն աւելի՝ քեզի խոր-
հուրդ տայ և խելք սորվեցընէ : Նոր բարեկամնե-
րըդ՝ հիներէն վեր մի՛ բըռներ , տահա՛ աւելի նայէ՛
որ՝ բարեկամիդ աղտշանքովը չըրած բանըդ՝ օտար
մարդու խօսքով չընես : Չի մոռնաս որ՝ « Զօրաւոր
« մարդոց հետ բարեկամ ըլլալը՝ աշխարհք չի գիտ-
« ցող մարդոց անուշ կուգայ . բայց համը առնողը
« անուռնէն ալ կը դողայ » կըսէ բանաստեղծը :

Միտքըդ բէր որ մեծ եղողը՝ պըզտիկներուն հետ հեզութեամբ վարվելը կը սիրէ • ուստի հպարտութիւնը պըզտիկութեան նշան է :

Եսիողոս բանաստեղծին ըսածը միշտ միտքդ պահէ որ՝ ” մէկը քեզի աղէկութիւնմը ընէ նէ՝ շահով վճարելու պարտական էս ” • ուստի շնորհակալութիւնդ չափէն պակաս չէ՛, այլ աւելի ըլլալ կը վայլէ • Բայց ամէն մարդուն՝ ամէն ըրած բարերարութիւնը անխոհեմութեմ մի՛ ընդունիր • քեզի աղէկութիւնը ընել ուղող մարդուն երեսը շատ անգամ և աղէկ մը նայէ • քանզի երբեմն անանկ անխոհեմ մարդիկ կը գըտնըվին որ՝ մէկ թեթև և պըզտիկ աղէկութիւն մը ընելով՝ չէ՛ թէ բարեկամ, այլ ծառայ մը վաստըկիլ կողզեն • և թէ որ ծառայութիւն ընելու չզիջանիս նէ՛ ապերախտի անուն կը վաստըկիս • և հասարակութեառաջը անունիդ գէշ ելլալուն միասը՝ տեսած աղէկութեանըդ օգուտէն մեծ կըլլայ :

Ուստի աւելի դուն քու ճարտարութեանդ վրայ ակնկալութիւն ըրէ՛, քան թէ ուրիշին ընելու աղէկութեմը վրայ : Առաջինը ընելով՝ գործասէր (համարած) կըլլաս, և հիշ մէկէ մը կախում չես ունենար • աչքըդ օտարին ձեռքը չըլլար • երկրորդը ընելով՝ պարաս կենալ կը սորվիս, և ուրիշին կամայք գէրի կըլլաս : Հոմերոսի բանաստեղծութիւններուն մէջ գըտնըված խելացի խօսքերուն ամէնէն աղէկը այս է • ” Մէկ մարդ մը իր ազատութիւնը կորսընցուցած օրը՝ իր հոգիին ալ կէսը կորսընցուցած կը սեպվի ” :

Թէ որ հասարակութեան Աշխարհ ըսած բանը աղէկ մը չի ճանաչեսնէ՝ չես կըրնար աղէկ քաղաքավար ըլլալ • և աշխարհ ըսվածն է հասարակութեան բարքը , սովորութիւնները, կիրքերը, և ամէն բանին տեղն ու վայելչութիւնը • ասոնք ճանաչելուն կըսեն Աշխարհք գիտնալ : Ուստի մինակ կեցող մարդու սովորական եղած հաստութենէն և կոպիտութենէն ազատելու համար՝ աղնիւ մարդոց ընկերութիւնը երթալ գըտնըվիլ սորվէ • Թէ որ ուրիշը խօսիլն իբէն անոր խօսքը կըտրելու և դուն խօսելու անհամբերութիւն ունիսնէ՝ զսպել, և մէկին խօսածը առանց սրտնեղութիւն ցըցընելու մտիկ ընել, և ուրիշին առանց մտածելու անշնորհք բան մը ըրածին չի նեղանալ, և հոն գըտնըվողներուն բարուցը և բնաւորութեւն քու խօսքերդ յարմարել, և քու կարծիքիդ վրայ յամառեալ չիմնալ, և ուրիշին խօսքին և մըտքին աղէկ մըտադրութիւն ընել, և ուրիշին հետ վիճելու ատենըդ շատ չի տաքնալ, և պարասդ բաներու վրայ իմաստակութեամբ վէճ չի հանել, և հպարտ և ինքնահաւան կերպով դուն քեզ ճշմարտութեան թշնամի չընել : հոն կը սորվիս :

Քուկին շատ անգամ խաբված ըլլալդ միտքդ բերելով՝ ուրիշին խաբվելուն և մէկ բանը սխալ միտք բըռնելուն դիւրաւ կընէրես • և ինքը զինք անսխալ կարծել՝ անխելքներուն կը թողուս :

Այս հասարակ խրատներուն հակառակը գործել՝ բարեսիրտ չըլլալու նշան է • որ իմաստուն և գիտուն երևիլ ուզելով ընկերական ըլլալու պարտականու-

Թիւները մեկիցի կը ձըգէ : Ռամիկները պիլէ ասանկ մարդիկ քիմիայի ետեւէ կյնողներուն կըրնան նմանցընել, որ ոսկի շինելու գաղտնիքը գըտնելու հոգնելով՝ և իրենց օրական ասլուստ ըլլալու ըստակը անոր խարճելով՝ իրենք անօթի կը մեռնին : Ամայն սուտ բժշկներուն , որ հազը բժշկելու զօրաւոր և անսխալ դեղ կուտան , իրենք հազէն կըճաթին :

Քուկին բարեւըրտութիւ առանց ուրիշին ծանր գալու քեղ ամենուն աչքին յարգելի կընէ . ուրիշին տկարութիւնները սուտ գոյութեամբ աղէկութիւն տէյի ցըցընելը շողքորթութիւ է . շիտեսնելու բերելը քաղաքավարութիւն է . մէկը չէս սիրերնէ՝ անոր սիրտը ծակելուդ տեղը՝ քու սիրտըդ ծածկէ . այն պակասութիւ՝ որ ոչ հասարակութե և ոչ առանձին մարդու մը վնաս չի բերեր , մի՛ տեսներ , և մի՛ խօսիր . ուրիշին ուղածին և ընկերութեան կալքին զիջանիլ պէտք է , բայց քուկին խղճմտանքիդ ալ փուշ ըլլալու չէ :

Աղատութիւնդ խելքով վարէ . ուրիշին ծուռ կարծիքին և նախապաշարմանը մի՛ բըռնըվիր , գերի մի՛ ըլլար . բայց հակառակ ալ մի՛ կենար . և ամէն մէկը իրեն վայլած կերպովը յարգելով՝ քեզ գովութեան արժանի մարդ ցըցո՛ւր :

Երբեմն ծանր կեցի՛ր , երբեմն ալ զուարճախօսութիւն ըրէ . բայց ոչ ծանրութեամբ շփանալ կը վայլէ , և ոչ զուարճախօսութիւն ընեմ ըսելն իքէն՝ խեղկատակութիւն ընել . պարզութիւն ցըցո՛ւր խոհեմութեամբ , համեստութի՛ւ համարձակութեամբ .

խելացի կատակներ կըրնաս ընել, բայց քու բնա-
 ւորութիւնդ միշտ միակերպ բըռնելով: Աւրիշնե-
 րուն ինքնասիրութիւնը գիտնալով՝ դուն քու գի-
 տուն ըլլալդ ցըցընել պէտք չէ. բան մը հարցըլի
 նէ՝ միայն անոր պատասխանին վերցուցածին չափ
 գիտութիւն կըրնաս ցըցընել. առանց պատճառի
 դուն քու խելքըդ երևան մի՛ հաներ: Բան մը հար-
 ցըլած ասեն մը պիլէ՝ աղէկը ես գիտեմ ինձմէ՛
 սորվեցէք ըսելու պէս՝ խոխոտ պատասխան մի՛ տար.
 վսեմ գաղափարներըդ պիլէ հասարակ և ամեն խել-
 քին հասնելու բաղդատութիւններով պարզէ՛. բա-
 րոյսկան խրատըդ զուարճալի խօսքերու ծաղիկնե-
 րով զարդարէ: Երբ որ քու կարծիքիդ հակառակ
 կեցող և չի հաւնողներ գըտնըվին նէ՝ կըրնաս միտ-
 քըդ անոնցմէ ծածկել, բայց թէ որ քու խղճմտանքիդ
 և քու գիտցածիդ դէմ խօսիս նէ՝ վախկոտ՝ սըտա-
 խօս՝ կամ ցած շողոքորթ կը սեպվիս:

Թէ որ համբաւ վաստըկիլ ուզես նէ՝ ճամբան
 դիւրին է. ինչ երևիլ կուզես նէ՝ իրօք այն եղի՛ր:

Աղէկ միտքըդ պահէ որ, մէկ մարդ մը ինքը զինք
 գովէ նէ՝ ուրիշները զինքը գովելու պարտականու-
 թենէն կազատէ. քու վրայդ զարմացող և քեզի հաւ-
 նող շատ գըտնելու իրքան հոգնիս նէ՝ այնքան քիչ
 կը գըտնես: Համեստ մարդուն լեզուն՝ ճշմարտու-
 թեան աւելի շատ կողմնակից կը գըտնէ, և մէկ մարդ
 մը ինք իրեն ըսածին չի վտասիլ (կիւ վէն միշ չըւ-
 ւալ) ցըցընէ նէ՝ մտիկ ընողները բերնէն փախած
 սխալներուն դիւրաւ կը ներեն: Թէ որ մարդոյս

խեղճութեանը և տգիտութեանը աղէկ խելքը հասած ըլլայնէ՝ հպարտութեան չէ թէ քեզի տիրող ըլլալու, այլ և քու վրայ դալու պիլէ ժամանակ չէս տար: Ասով ըսել չեմ ուզեր որ՝ ինքը զինք մեծընէլու համար սուտ խօսողին ըսածներուն հետ քու ըսածները և քու միտքը բաղդատելով՝ քու կ'իններուդ աղէկութիւնը և ազնուութիւնը չեմանաս, և քու գիտութիւնդ՝ տգէտ ուսմիկներուն յիմարական ճառատանքներէն վեր ըլլալը չգիտնաս, այլ այս աղէկութիւններով աչքըդ զօշոտել (խամաշիշ ըլլալ) պէտք չէ. քեզի ասանկ բաղդատութիւնները՝ ուրիշ բաղդատութիւն կանոն կը ըլլան:

Քեզ մէկը նախատէ և քամահէնէ՝ դուն քեզ շուտ մը պըզտիկցած մի սեպեր, մէկն ալ գովէնէ՝ քիթըդ չի մեծնայ: Բանաստեղծը կըսէ. «Նա-
«խատինքով պըզտիկցող և ամէն գովեստով մեծ-
«ցող մարդը՝ եղէդ (խամիշ) կը նմանի, որ սըքան
«թեթև հով փըչէնէ՝ մէկ մը մէկ դին կը ծըռի,
«մէկ մը մէկալ դին:

Թէ որ կուզես որ քու կին ունեցած գովելի յտակութիւնները ճանչըրկին՝ ուրիշին գովելի բանը շուտ մը գովելու ես. անօրէններուն՝ խստութիւն ցըցուր, բայց նայէ որ խօսքըդ գործքովդ չի սըտես. կեղծաւորները ծաղը ըրէ, ամէննին անուննին և հագուստնին և գոյներնին մի նայիր. ամէնուն համար ճմարիտ և արդար խօսէ, թէ և քու կին թշնամիներդ ըլլան: Թէ որ կամ բաղդով կամ պատուաւոր գործունէութիւնով կամ արուես-

տող վիճակդ աղէկցուցած էս , ուրիշին կարօտ չէս, կըրնաս ուժով մարդոց հարստահարութիւնը և ագիտութիւնը համարձակ պախարակել , և անոնց ինչ ըլլալը հասարակութեան իմացընէ՛լ ինչպէս որ գողերն ու աւազակները և մարդասպանները՝ քաղաքներուն կառավարութե՛ք ատենին կ'իմացընեն :

Թէ որ վիճակիդ չէս կըրնար ապաւինիլ նե՛՛ լեզուդ բռնել հարկ կըլլայ . բայց մինչև ցածութեան և ստախօսութեան զիջանելու հի՛չ մէկ ատեն մը հրաման չկայ :

Թէ որ գըտնըված ընկերութեանդ մէջ ամէնաւն հաճելի ըլլալ կուզեսնէ՛՛ ամէն մարդու ժամանակ և առիթ տո՛ւր որ գիացածը խօսի, և թէ որ գովելի բան մը ըսէ նէ՛՛ գովութեան ադահութիւն մի՛ ըներ :

Թէ որ ընկերութե՛ք մէջ մինակ էս խօսիմ՝ ըսես , կամ քեզի և քու ունեցածներուդ և քու կարողութեանդ համար երկան խօսիս , կամ բնաւ չխօսելով միայն ուրիշի խօսածը մըտիկ ընես՝ և քեզ լըրաես կամ անխօսէմ՝ կարծել տաս՝ ընկերութե՛ք մէջ գըտնըվողներուն ճանճրութիւն կը բերես :

Պարկեշտութեամբ բարեխառնեալ ազատութի՛ր՝ և հաւասարութիւնը՝ ընկերութեան մէջ գըտնըված ատենը յարգի ըլլալու հիմն են : Բոլոր ընկերութե՛ք ընթացքը համարձակ և զուարճալի խօսելով , և հոն գըտնըվողներէն կասկած չի ցըցընելով պիտի ըլլայ :

Իրար մեծարելը , իրարու խաթըր սեպելը , և իրարու կամացը և ասորժակին համեմատ ըլլալը՝ ընկերութիւնը սիրելի կընեն : Ինքնահաւանութե՛ք

ամէն բանէ առնըլիլը , ամբարտաւանութեամբ՝ մեծութեան վէճ (խտախա) քըշէլը , մեղամաղճոտի պէս ժանկքը կախել նստիլը , դեգուծիւնը (թիթի-զուծիւնը) , քաղաքավարական արարողութեանց ճիշդ պահպանութիւն ուղեւը՝ ընկերութիւնը կը գէշընեն և կը ծանրացընեն : Իշու ծանրութիւն ունեցող մարդոց հետ կատակ (շախա) չես կըլինար ընել , զուարճութիւն ըսված բանն ալ գալու՝ ժամացոյց զարնելու պէս որոշեալ ժամանակ չունի :

Թէ՛ ծաղըր և թէ՛ զուարճախօսութիւլ և դըպչուկ խօսիլը՝ զգուշութիւն կուզեն , ասիկայ մլտքէդ մի՛ հաներ : Թէ՛ որ ծաղըր շատկեկ դըպչող ըլլայ նէ՛ սաստիկ ատելութիւններու ալ պատճառ կըլլայ , և խելացի եղող մարդը ատելութեան պատճառ տալէն փախչելու է : Ուրիշներուն պակսութիւնը չի տեսնելու բերելով՝ դուն քեզ աւելի սիրելի կընես , քան թէ մէկին պակսութիւնը տեսածիդ պէս պախարակելով :

Համեստ մարդոց աչքին առաջը հարկինք ունենալու համար հարկ է որ՝ ուրիշները քեզնէ ինչ բան ուղեւ իրաւունք ունին նէ՛ անիկայ դուն քեզնէ տաս . քու մեծերըդ յարգես և հնազանդութիւն ցըցընես . հաւասարներուդ հետ անուշութիւլ վարվիս և խաթրերնին սեպես , ծնողքներէդ չի զատվիս՝ և սէր ցըցընես . բարեկամներէդ կասկածիլ չի ցըցընես և սիրով վարվիս . թշնամիներուդ դուն քեզ վեհանձն ցըցուր , ըրածնին բանի տեղ մի՛ սեպեր , խեղճերուն ցաւակից և մարդասէր եղիր .

ամենուն հետ ալ հաւատարիմ եղի՛ր, ձեռքէդ եկած
օգնութիւնը ըրէ՛ . բայց ասոնք ամենն ալ ընելու
ատենըդ կընեմ կոր տէյի ցըցընելու չէ . վարմուն-
քիդ մէջ խեղեփնալ և ինքնահաւանութիւն չըլլայ :

Մտաբեր որքան բարի՝ և սիրտըդ շիտակ՝ և վար-
մունքըդ խելացի ըլլայ՝ նէ՛ գիտցիր որ թշնամի կըր-
նաս ունենալ . ուրիշին ինքնահաւանութիւնը՝ կամ
շահասիրութիւնը՝ կամ նախանձը՝ կամ կասկածոտ
բարբը՝ կամ չարասիրտ ըլլալը՝ կըրնոյ առանց դուն
յանցանք մը ունենալու քեզի թշնամի յարուցանել
(բէյտահ ընել) : Թէ որ թշնամիներդ քեզ մար-
դու տեղ չի դնեն , և քու անունըդ աւրօղները
կեղծաւոր մարդիկ չըլլան՝ նէ՛ քեզի համար տահա
դէշէ : Ասանկ ցած մարդոց մի ցըցըներ որ կըրնան
կոր քեզ անհանգիստ ընել . ասով լըրբութիւննին
աւելի կը շատնոյ . գիտցած ըլլաս որ՝ միակերպ
համեստ և կանոնաւոր վարքի դէմ եղած զըրպար-
տութիւնները՝ ամպէ ձեռացած մուրճ և ուրագ
(քիւլիւնիկ և քէսէր) են , պատ չնն փըլցըներ :

Քուկին առաքինութիւնդ ծածկելու համար՝ չա-
րասիրտ մարդուն վերցուցած փոշին շուտ կը ցըր-
ւի . առաքինութեան աշտարակը առաջինին պէս կը
մնայ : « Եկո՛ւր ետեէս՝ կըսէ բանաստեղծը , թող
« որ ամէն մարդ գիտցածը ըսէ . գետնի պէս հաս-
« տատ կեցիր , որ հով փըչելով չերերիր :

Թէ որ շուտ մը ժանկբեր կախելու և թշնամութի
ցըցընելու տեղը շուտ մը քուկին բըռնած ճամբադ
բացատրելով դուն քեզ արդարացընես , կամ խե-

լայի և բարի մարդ մը մէջ ձըգես , որ քուկին սիր-
տըդ նեղանալը պահելով՝ միայն քուկին ունեցած
իրաւունքըդ անոր հասկըցընէ նէ՝ նախապաշարու մը
վերցընելը քեզի շատ դիւրին կըլայ : Ինչ ըլլայ նէ
ըլլայ՝ դուն այս ալ մի՛ մոռանար որ՝ շատ անգամ
Թշնամիները մարդոյս օգտակար են . քանզի իրաւը
խօսին նէ՝ մեր սխալ գործքերը մեզի կը սորվե-
ցընեն . առանց ըստակ ուղեւը մեզի վարժապե-
տութի կընեն : Քեզի տալու մէկ խրատս կը մնայ .
և ասիկայ Թէպէտ քեզի զարմանք կըբերէ . բայց ես
հարկաւոր կը սեպեմ . նայէ որ առանց պակասութե
չըլլաս : Շատ մարդ կայ որ՝ մինչև որ քու վերադ
պակասութի չի տեսնեն նէ՝ աղէկութիւններըդ չեն
զրուցեր . նախանձոտ մարդ մը՝ որ ինքնին մեծ ա-
ղէկութիւն մը չունի , ուրիշին համար գէշ չի զրու-
ցած չըլար . ինչպէս որ եզը առանց որսձալու (կե-
վիշ բերելու) չի կըրնար կենալ : Աեանքդ գողե-
րուն ձեռքէն ազատելու համար՝ ստակիդ քսակը ա-
նոր ձեռքը կուտաս . հարկ է որ համբաւըդ և աղէկ
անունդ պահելու համարալ ուրիշներուն բերանը
մէկ պակասութիւն մը ձըգես որ՝ անիկայ ծաղսելով
սիրտերնին պաղըչի , և քու անունդ չի քաշքը-
չէն : * Բայց կուզէի որ քուկին պակասութիւնըդ

Ճա : * Աղկիբիադէս անուն Աթենացին՝ Սոկրատայ
աշակերտներէն էր , բայց մոլի մարդ մըն էր : Օր
մը իրեն գեղեցիկ մէկ շանը պոչը կըտրեց . բա-
րեկամները հարցուցին նէ ըսաւ . կուզեմ որ

և անկատարութիւնդ բարեսրտութենէ առաջ եկած
 ըլլան . քուհին պարտականութիւններուդ մնասմը
 չի տան . կուզէի որ ըսված խօսքին անհամեմատ թե-
 թե մէկ խօսք մը բերնէդ փախած ըլլար՝ որ գըտ-
 նըվողները քիչ մը վրասդ խնդային , բայց չի կարե-
 նային չարամիտ է տէյի քեզ աղտոտել : Տէսբրէօ
 բանաստեղծը՝ անգամ մը քարոզիչի մը համար նը-
 սէր որ , ստեանը տրված քարոզին նայիսնէ՝ անանկ
 խիստ և աղաշխարող վարք ունենալու է որ՝ մար-
 մինը ճնշի և միշտ տկար և վատուժ մնայ . իրեն
 կատարեալ առողջութիւնը և գերութիւնը կը ցը-
 ցընեն որ՝ իր տրված քարոզը՝ իր կենացը համար
 բռնած կանոնին բացատրութիւնը չէ : Լամուան-
 էօն ազնուականին աղջիկը հոն գըտնըվեցաւ . և այս
 ընելով ըսաւ . կը լըսենք որ այն քարոզիչը այս օրերըս
 զատուանալ ըսկըսեր է : Այս խօսքըս աղջուկանը
 բարեսրտութիւնը յայտնելով՝ գըտնըվողները վրան
 խնդացին ալնէ՝ բամբաստելու բան մը չի գտան * :

Աթենացիք շանը պոչին վրայ խօսին , իմ ուրիշ
 ըրածներըս չի պախարակեն :

Ծ. * Բանաստեղծն ալ ծաղրական խօսեցաւ .
 քանզի մէկ մարդուն սբ կամ մեղաւոր ըլլալը՝
 փորուն մեծ կամ պըզտիկ ըլլալէն չի ճանչցըվիր :



